

407 1150  
ճարգմ. Ռ. ԽԱՆ-Ա.ՉԱՏ.

871.71

S-80

ՏՕՒՏՕՅ

ՏԷՐՆ

ՈՒ

ԲԱՆԻՈՐԸ



1911

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Էջիբեք. սպ. Օր. Կ. Ազատիկանի  
Պոլից. 7.

891.71-3  
S-80  
պ.

19 NOV 2010

ԿՕՐԾ Լ. Ն. ՏՈՒՍՏՈՅ

# ՏԵՐՆ ՈՒ ԲԱՆԻՈՐԸ

1002  
6236



Թարգմանեց

Ռ. ԽԱՆ-ԱԶԱՏ.



Թ Ի Յ Լ Ի Ս

Էլիբեհ. սպ. Օր. Ն. Ա. դանեանի  
1910

23 .08. 2013


TO BE SOLD

JOHN J. B. BOLTON

ՀԵՐՆ ՈՒ ԲԱՆԻՈՐԸ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ


ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
ԵՐԵՎԱՆ, ԳՐԱԴԱՐԱՆԻ ՎՈՐՆԵՐԻ ԿՈՒՆԻԿՆԵՐԻ ԿՈՄՊԼԵՔՍԻ  
1910



ՀԵՐՆ ՈՒ ԲԱՆԻՈՐԸ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

1927



† ԿՕՄՍ Լ. Ն. ՏՕԼՍՏՅՅ

# ՏԵՐՆ ՈՒ ԲԱՆՒՈՐԸ

I

70-ական թւականներին էր, ձմեռայ ս. Նիկողոսի տօնը երկրորդ օրը: Գիւղումը տօն էր, և այդ պատճառով էլ գիւղի պահապան, 2-րդ գիւղի վաճառական Վասիլի Անդրէիչ Բրեխունովին անկարելի էր գիւղից հեռանալ. նա պարտաւոր էր եկեղեցում գտնուել,—որովհետև նա եկեղեցու երեսփոխ էր,—պէտք էր և տանը ազգականներին ու ծանօթներին ընդունել ու հիւրասիրել: Բայց ահա, վերջին հիւրերը հէնց որ գնացին, Վասիլի Անդրէիչը սկսեց իսկոյն պատրաստուել հարևան կալածատիրոջ մօտ գնալու, վաղուց արդէն սակարկած նրա մի անտառը գնելու համար: Վասիլի Անդրէիչը շտապում էր գնալ, որպէսզի քաղաքի վաճառականները նրա ձեռքից չը խլեն այդ արդիւնաւէտ առևտուրը: Երիտասարդ կալածատէրը անտառի հա-

մար տաս հազար ըուրլի էր պահանջում  
այն պատճառով միայն, որ Վասիլիյ Անդ-  
րէիչը եօթ հազար էր առաջարկել: Իսկ  
եօթ հազար ըուրլին անտառի իսկական  
արժողութեան մի երրորդ մասն էին միայն  
կազմում: Վասիլիյ Անդրէիչը, գուցէ, կա-  
րողանար էլի պահսեցնել գինը, որովհետև  
անտառը նրա շրջանի մէջ էր գտնուում, և  
նրա ու գաւառի գիւղական վաճառական-  
ների միջև վաղուց արդէն այնպիսի կարգ  
էր հաստատւած, որ մի վաճառական չը  
պէտք է միւսի շրջանում եղած կալւածքի  
գինը բարձրացնէր: Սակայն Վասիլիյ Ան-  
դրէիչը իմացել էր, որ նահանգի փայտա-  
վաճառները ուղում են գնալ Գօրեաչկինեան  
անտառը գնելու, ուստի և նա որոշեց հէնց  
իսկոյն գնալ ու վերջացնել գործը կալւա-  
ծատիրոջ հետ: Այդ պատճառով էլ, հէնց  
որ տօնը վերջացաւ, նա սընդուկից հանեց  
իր սեփական 700 ըուրլին, աւելացրեց զրա  
վրա իր մօտ եղած եկեղեցական 2300  
ըուրլին, որպէսզի 3000-ը լրանայ, և ապա,  
խնամքով զրամը համրելուց ու թղթակալի  
մէջ դարսելուց յետոյ, նա պատրաստեց  
ձանապարհ ընկնել:

Բանւոր Նիկիտան, որը Վասիլիյ Անդրէ-

իչի բանւորների մէջ միակն էր, որ այդ  
օրը հարբած չէր, վաղեց ձիերը լծելու  
Նիկիտան այդ օրը հարբած չէր նրա հա-  
մար միայն, որ նա հարբեցող էր և այժմ,  
բարեկենդանից դէսը, երբ նա օղու էր  
տւել իր վերնագգեստն ու կաշւէ կօշիկ-  
ները, երդւել էր չը խմել ու երկրորդ  
ամիսն էր, ինչ չէր խմում: Նա հիմայ էլ  
չէր խմում, չը նայելով որ տօների առաջին  
երկու օրը, երբ ամենքն էլ խմում էին,  
խմելու չափազանց մեծ հրապոյր կար:

Նիկիտան 50 տարեկան գիւղացի էր մօ-  
տակայ գիւղից: Չունենալով սեփական  
տնտեսութիւն, ինչպէս նրա մասին ասում  
էին, նա իբ կեանքի մեծ մասը անց էր  
կացրել ուրիշների մօտ ծառայելով: Ամեն  
տեղ էլ նրան դնահատում էին իր աշխա-  
տասիրութեան, ճարպիկութեան և լաւ աշ-  
խատելու համար. նամանաւանդ նրան գնա-  
հատում էին իր բարի և դուրեկան բնաւո-  
րութեան համար: Այնուամենայնիւ նա ոչ  
մի տեղ երկար չ'ը կարողանում ապրել,  
որովհետև տարեներ մի-երկու անգամ, եր-  
բեմն էլ նոյնիսկ աւելի յաճախ հարբում էր  
և այն ժամանակ, բացի այն, որ իր վրայի  
ըոլոր ունեցած-չունեցածը օղու էր տալիս,

այլև շատ կոպիտ ու անբարիշտ էր դառնում: Վասիլիյ Անդրէիչն էլ նրան մի քանի անգամ վնդդել էր, բայց նորից վերցրել էր: գնահատելով նրա ազնուութիւնը, դէպի անասունները ունեցած նրա սէրը և, ինչ ամենից գլխաւորն է, նրա էփան զնով ծառայելը: Վասիլիյ Անդրէիչը Նիկիտային վճարում էր ոչ թէ 80 ռուբլի, ինչպէս որ արժէր այդպիսի մի բանւորը, այլ 40 ռուբլի, և այդ նրան վճարում էր անհաշիւ կերպով՝ մաս-մաս, փոքրիկ գումարներով, և այն էլ մեծ մասամբ ոչ թէ դրամով, այլ իր խանութից թանգ գնով հաշւած ապրանքով:

Նիկիտայի կինը—Մարթան, որը մի ժամանակ դեղեցիկ, աշխոյժ գեղջկուհի էր եղել, ապրում էր տանը իր պատանի որդու և երկու աղջիկների հետ ու Նիկիտային չէր կրնչում: Իրանց հետ ապրելու և այդ նախ այն պատճառով, որ նա արդէն 20 տարուց ի վեր ապրում էր տակառագործի հետ, որը օտար գիւղացի էր և իրանց տանն էր ապրում, երկրորդ՝ այն պատճառով, որ, թէև Մարթան իր ամուսնուն կարող էր անել տալ, ինչ որ ինքն էր ցանկանում, երբ նա օյաղ էր, բայց և նրա

նից վախենում էր, ինչպէս կրակից, երբ նա հարբում էր: Մէկ անգամ Նիկիտան, տանը մի լաւ հարբելուց յետոյ, կամենալով, երևի, կնոջից վրէժ առնել այն բոլոր խոնարհութեան համար, որ նա ցոյց էր տւել օյաղ ժամանակները, կոտրեց նրա սնդուկը, հանեց նրա բոլոր թանկագին զգեստները և, վերցնելով կացինը, մի հաստ կոճղի վրա դրեց նրանց ու մանր բրթոջի նման կտոր-կտոր արեց կնոջ դերիաներն ու միւս հագուստները: Նիկիտայի վաստակած ամբողջ ոռճիկը նրա կնոջն էր տրուում, և Նիկիտան չէր հակառակում դրան: Այսպէս օրինակ, տօներից երկու օր առաջ Մարթան եկել էր Վասիլիյ Անդրէիչի մօտ և տարել էր նրանից սպիտակ ալիւր, թէյ, շաքար, մի քառորդ զեղրօ օղի, ամբողջը հրեք բուրլու ապրանք, և հինգ ռուբլի էլ դրամով, ու շնորհակալութիւն էր յայտնել այդ բոլորի համար, իբրև մի առանձին շնորհի համար, մինչդեռ ամենաէփան գնդրով հաշւելով հանդերձ Վասիլիյ Անդրէիչը դեռ պարտ էր մնում 20 ռուբլի:

—Մեք միթէ որ և է պայմաններ ենք կապել քեզ հետ,—ասում էր Վասիլիյ Անդրէիչը Նիկիտային: Հարկաւոր է, վերցրո՛ւ.

տեղը կը հանես: Ինձ մօտ ուրիշներ չես  
չէ. «այ, սպասիր, հաշիւ տեսնենք, շարաֆ-  
ներ դուրս գանք»: Մենք խղճով ենք մեր  
գործը տանում: Դու ինձ մօտ ծառայում  
ես, իսկ ես էլ քեզ կարօտութեան մէջ չեմ  
թողնում:

Եւ, այդ ասելով, Վասիլի Անդրէիչը ան-  
կեղծ հաւատացած էր, թէ ինքը բարեգոր-  
ծութիւն է անում Նիկիտային. նա այդպէս  
համոզեցուցիչ կերպով էր կարողանում խօ-  
սել և նրա փողերից կախումն ունեցող  
մարդիկն սկսած Նիկիտայից, խրախու-  
սում էին նրան այդ համոզմունքի մէջ, թէ  
նա չէ խաբում, այլ բարեբարում է ի-  
րանց:

— Այո, ես հասկանում եմ, Վասիլի Ան-  
դրէիչ. կարծեմ, որ ես էլ լաւ եմ ծառայ-  
ում, այնպիսի ժրջանութեամբ եմ ծա-  
ւայում, ինչպէս որ հարազատ հօրս մօտ  
լինէի: Ես շատ լաւ եմ հասկանում,— պա-  
տասխանում էր Նիկիտան, ինքն էլ շատ  
լաւ հասկանալով, որ Վասիլի Անդրէիչը  
խաբում էր իրան, քայց և միևնորոշ ժամա-  
նակ զգում էր, որ աւելորդ է նրան իր հա-  
շիւները բացատրելու փորձ անելը, այլ և  
պէտք է ապրել, քանի որ դեռ ուրիշ ան-

չէ գտել, և պէտք է վերցնել, ինչ որ տա-  
լիս են իրան:

Այժմ, տիրոջից կտոքը լծելու հրաման  
ստանալով, Նիկիտան, ինչպէս և միշտ, ու-  
րախ ու զւարթ, իր սագի նման օրօրուող  
ոտների առոյգ և թեթև քայլածքով գնաց  
սարայը, վերցրեց այնտեղ մեխի վրայից  
կաշէ ծանր, փունջուխով դարդարած  
սանձը և, երկաթները շրխ-շրխկացնե-  
լով, դնաց դէպի փակած դռը, ուր ա-  
ռանձին կանգնած էր այն ձին, որը Վասի-  
լի Անդրէիչը հրամայել էր լծելու:

— Հը, տխրե՛լ ես, տխրե՛լ ես, յիմարիկ,  
— սսում էր Նիկիտան, պատասխանելով  
«բարի եկար» արտայայտող այն մեղմա-  
ձայն խրխնջոցին, որով նրան դիմաւորեց  
աշտոռի առաջ միայնակ կանգնած միջին  
հասակով, ամրակազմ, յեռեւր փոքրինչ ցած  
իջած, աշխէտ, կարմրագոյն ու Բաշօ ճա-  
կատ ջահել ձին:

— Կաց, կաց, դեռ ժամանակ կայ, թող  
հալա մի ջրիմ,— խօսում էր նա ձիու հետ  
ձիշտ այնպէս, ինչպէս որ խօսում են խօսք  
հասկացող էակների հետ, և, իր հագուստի  
փեշովը թափ տալով ձիու գիր, ջրորդանի  
ձևով երկու մասի բաժանւած, մէջքի փո-

շին, նա ձիու գեղեցիկ գլխովն, անցկայրեց սանձը, ուղղեց նրա ականջներն ու ձա- կատի փունջը և, մի կողմ գցելով պահուց- քը, տարաւ նրան ջրելու:

Զգուշութեամբ՝ բարձրաբերձ աղբի կոյ- տերով լի՝ գոմից գուրս դալուց յետոյ, Բաշօն սկսեց խաղալ և քացի-քացի անիլ, այնպէս ձևանալով, թէ կամենում է յետի ոտքով խփել իր հետ դէպի Չրհորը վաղով Նիկիտային:

— Գժէիր, գժէիր, չարածձի, — ասում էր Նիկիտան, շատ լաւ իմանալով, որ Բաշօն մեծ զգուշութեամբ էր յետի ոտներով քա- ցի անում. նա ոչ թէ ուզում էր Նիկի- տային խփել, այլ չէնց այնպէս, կամենում էր միայն նրա կեղտոտ քուրքի փեշերին դիպցնել ոտը, և շատ սիրում էր այդ էւաղը:

Սառը ջուրը խմելուց յետոյ, ձին խորը շունչ քաշեց, թաց ու պինդ շրթերը շար- ժելով, որոնց վրայից բեղերի միջոցով պարզ չրի կաթիլները թափուում էին տաշ- տի մէջ, և ապա քարացած կանգնեց, կար- ծես թէ մտածմունքի մէջ էր ընկել: Յետոյ, յանկարծ նա ամուր փոշտաց:

— Էլ չէ՞ս ուզում, հարկաւոր էլ չէ. այդ-

պէս էլ կիմանանք. դէ՛հ, այլևս չը խնդրես, — ասաց Նիկիտան, բոլորովին լուրջ կեր- պով հացատրելով իր վարմունքը դէպի Բաշօն, և նորից վաղեց դէպի սարայը, հե- տեից քաշելով քացի-քացի անող ու ամ- բողջ բակը թնդացնող երիտասարդ, աշ- խոյժ ձիու սանձից:

Բանուրներից ոչ ոք չը կար բակումը. մէկ օտար բանուր կար միայն, խոհա- բարունու ամուսինը, որը եկել էր աօսերի պատճառով:

— Գնա հարցրու, չոզի ջան, — ասաց նրան Նիկիտան, — ժր սահնակն են հրամայում լծել. մեծը թէ՛ փոքրը:

Պոհարարունու ամուսինը գնաց նրկա- թածածկ ու բարձր հիմքերի վրա կառուց- ւած տունը մտաւ և շուտով վերադարձաւ, լուր բերելով, թէ հրամայւած է փոքր սահ- նակը լծել: Մինչ այդ Նիկիտան արդէն ձիու վզովն էր անցկացրել շրջակապը, մէջքին էր դրել մեխերով զարդարւած կե- խը և, մէկ ձեռքում բռնած ներկւած թեթև լծագեղը, իսկ միւս ձեռքով քաշելով ձիու սանձից, մօտենում էր սարայում կանգնած կրկու սահնակներին:

— Գստիկն են ուզում, պստիկը կը լծենք:



—ասաց նա և լծափայտերի մէջտեղը հրեց խելօք ձիուն, որը ամբողջ ժամանակ այնպէս էր ձևանում, թէ ուզում է կծել Նիկիտային, և ապա, խոհարարուհու ամուսնու օգնութեամբ սկսեց լծել:

Երբ ամեն բան համարեա թէ պատրաստ էր և մնում էր միայն հրասանակները կապել, Նիկիտան խոհարարուհու ամուսնուն ուղարկեց սարայից յարդ և ամբարից էլ հաստ կտաւէ չարսաւ բերելու:

—Այ, լաւ է: Դէն, գէն, օտներդ մի չոիր, —ասում էր Նիկիտան, խոհարարուհու ամուսնու բերած նոր կալսած վարսակի դարմանը սահնակի մէջը փոխելով:—Իսկ հիմա թող ճիւղա՛ն էլ այսպէս փոենք, և կտանն էլ վրայից: Այ, հէնց այսպէս, այսպէս լաւ կլինի և լաւ կը նստուի, —խօսում էր նա ինքն իրան և անում, ինչ որ արում էր. նա փոեց կտաւէ չարսաւը յարդի վրայից և այն տեղը, ուր պիտի նստէին չորս կողմից լաւ ծածկեց յարդը:—Այ, շատ սպրեա, հոգի ջան, —ասաց Նիկիտան խոհարարուհու ամուսնուն, —երկուսով գործը աւելի շուտ է գլուխ գալի:—Նւ ապա, հրասանակները երկաթէ օղակի միջոցով միմեանց միացնելով ու հաւաքելով ձեռքի մէջ, Նիկիտան

նստեց սահնակի առաջի կողմի վրա և քշեց առդէն տեղից շարժել ցանկացող աշխոյժ ձին: Բակի սառած աղբակոյտերի վրայով անցնելով, նա ուղևորեց դէպի մեծ դուռը:

—Քեռի Միկիտ, քեռի ջան, այ քեռի ջան, —բարակ ձայնով կանչեց նրա յետևից շտապով նախասննակից բակը դուրս պրծած եօթ տարեկան մի տղայ, փոքրիկ սև մուշտակը հագին, նոր սպիտակ թաղիքէ կոշիկները օտներին և մի տաք գլխարկ էլ գլխին:—Ի՛նձ էլ նստացրու, — խնդրում էր նա, վազած ժամանակ մուշտակի կոճակները կոճկելով:

—Ի՛է վազիր. դէ վազիր, —ասաց Նիկիտան և, կանգնեցնելով ձին, նստացրեց ուրախութիւնից դէմքը փայլող իր տիրոջ գունատ, նիհար տղին և ձին քշեց, դուրս եկաւ փողոց:

Փամի երկուսը անց էր: Օրը յուրս էր մետ տաս աստիճան, ասպամած էր և քամի էր: Երկնքի կէս մասը ծածկւած էր սև ու մութ ամպով: Բայց բակում խաղաղ էր: Փողոցում քամին աւելի նկատելի էր. հարևան սայլատան կտուրից քամին սրբում էր ձիւնը և պտտեցնում էր բաղնիքի մօտի անկիւնում: Հազիւ էր Նիկիտան սահ-

նակով դուրս եկել բախից ու տան գլխաւոր մուտքի մօտ կանգնել, երբ Վասիլիյ Անդրէիչն էլ նախասննակից դուրս եկաւ, պապիրոսը բերնին, ոչխարի մորթուց մեծ մուշտակի մէջ փաթաթուած ու երկար գոտիով մէջքը պինդ կապած, և կանգնեց սանդուխների գլխին: Սանդուխների վրա առատութեամբ հաւաքուած ձիւնը ճրոճը ուժ էր նրա թաղիքէ, բայց կաշիով պատած, կոշիկները սակ: Նա պապիրոսի մնացորդից ծուխը մի լաւ ներս քաշեց, պապիրոսը վայր գցեց ու ոտքէ դրեց վրան և, բեղերի միջով ծուխը արձակելով ու ձիւն վրա խոժոռ հայեացք գցելով, ըսկսեց իր մուշուր անիւլած ու կարմիր երեսի երկու կողմի վրա էլ այնպէս խնամքով ներս ծալել մուշտակի վրի անկիւնները, որ մազը չը քրտնի շնչառութիւնից:

— Ախ լու, չարածձի, արդէն տեղաւորուել է, —ասաց նա, սահնակի մէջ իր տղիկին տեսնելով. Վասիլիյ Անդրէիչի գլուխը տաքացած էր հիւրերի հետ խմած գինուց և այդ պատճառով էլ սովորականից աւելի էր դոճ այն բոլորից, ինչ որ իրան էր պատկանում, և այն բոլորից, ինչ որ ինքն էր անում: Իր որդու տեսքը, որին նա միշտ

մտքումը ժառանգ էր անւանում, այժմ նրան մեծ գոհունակութիւն էր պատճառում. աչքերը կիսախուփ արած և երկար ատամները բացած որդուն էր նայում:

Վասիլիյ Անդրէիչի պատճառաւոր, դունատ ու նիհար կիներ, որը գլուխն ու ուսերը այնպէս էր փաթաթել բրդէ թաշկինակով, որ միմիայն աչքերն էին երևում, դուրս գալով ամուսնուն ճանապարհ գցելու, կանգնել էր նրա յետևում նախասննակում:

— Իսկապէս, լաւ կը լինի, եթէ Նիկիտային հետդ վերցնես, —ասաց նա, զգուշութեամբ գլուխը դռան յետևից դուրս հանելով:


Վասիլիյ Անդրէիչը ոչինչ չը պատասխանեց կնոջ խօսքերին, որ թուում էր, նրան դուր չեկան, այլ միմիայն րարկացած յոնքերը հաւաքեց ու թքեց:

— Փող ես տանում հետդ, — շարունակեց նոյն ողբալի ձայնով կիներ:

— Եղանակն էլ վատ, Ատուած վկայ լաւ կը լինի, որ տանես:

— Ի՞նչ, միթէ ես ճանապարհը չեմ ճանաչում, թէ անշքով ետ պիտի գնամ, որ միշտ թիկնապահները ունենան, — ասաց Վասիլիյ Ան-

29-62/25



դրէիչը այնպէս անընական կերպով շրթնի-  
րը սեղմելով, ինչպէս որ նա սովորաբար  
անում էր առնող ու ծախող մուշտարիներէ  
հետ, խօսած բառերի ամեն մի վանկը որոշ  
արտասանելով:

—Դէ, իսկապէս, լաւ կանես, որ վերցնես:  
Աստծու անունով եմ խնդրում քեզ,—կըրկ-  
նում էր կինը, գլխի թաշկինակը մի կող-  
մից դէպի միւս կողմը դարձնելով:

—Ի՞նչ ես բաղնիսի տերևի պէս կպչում...  
ախր ես ո՞ւր տանեմ նրան:

—Ինչ կայ որ, Վասիլիյ Անդրէիչ, ես  
պատրաստ եմ,—ասաց ուրախ դէմքով Նի-  
կիտան:—Միայն թէ ստանց ինձ ձիերին  
ալափ տան,—աւելացրեց նա, տանտիկնուջը  
դիմելով:

—Ես կը նայեմ, Նիկիտաշկա, Սեմիո-  
նին կը հրամայեմ,—ասաց տանտիկինը:

—Ինչ կը հրամայէք, Վասիլիյ Անդրէիչ:  
գամ հետներդ,—ասաց Նիկիտան, պատաս-  
խանի սպասելով:

—Տեսնում եմ, պառաւի խօսքը չպիտի  
կոտորել: Բայց եթէ զալու ես, գնա մի ա-  
ւելի տաք վերնազգեստ հագիր,—ասաց  
Վասիլիյ Անդրէիչը, նորից ժպտալով և աչ-  
քի թարթիւնով ցոյց տալով Նիկիտայի

թևերի տակը, մէջքն ու փեշերը պատա-  
ռուած, կիզտոտ ու վրայից թափուող  
քուրքի վրայ:

—Էյ, հոգի ջան, արի մի ըրպէ ձին  
ընիր,—ձայն տւեց Նիկիտան բակում  
կանգնած խոհարարուհու ամուսնուն:

—Ե՛ս, ես կը բռնեմ,—ճըշաց տղան,  
դրպանից հանելով սառած ու կարմրած  
փոքրիկ ձեռքերը և ամուր ըռնելով կաշւէ  
սառը երասանակները:

—Միայն թէ շատ մի դուզւիր, շուտ արա  
—ձայն տւեց Վասիլիյ Անդրէիչը, ատամ-  
ները Նիկիտայի վրայ կրճտացնելով:

—Մէկ շնչով կը գնամ ու կը գամ, տէր  
իմ Վասիլիյ Անդրէիչ,—ասաց Նիկիտան և,  
շտապով դէպի ներս ծախելով իր ի՛ն ու պա-  
տառտած թագիքէ կոշիկների ծայրերը, վա-  
զնց դէպի բակը ու մտաւ ծառաների բեն-  
նակը:

—Դէ՛հ, Արխուշկա, շուտ արա, խալատս  
տուր վառարանի վրայից, տիրոջ հետ գնում  
եմ,—ասաց Նիկիտան ներս վազելով և մեխի  
վրայից երկար գոտին վերցնելով:

Բանուր կինը, որ ճաշից յետոյ մի լաւ  
ընել էր ու հիմա էլ սամովար էր դրում ա-  
մուսնու համար, ուրախութեամբ հանդիպեց

Նիկիտային և, նրա շտապողականութիւնից վարակելով, ինքն էլ սկսեց շտապով շարժուել և վառարանի վրայից ցած բերեց, չորացնելու համար այնտեղ փռած, հնամաշ մահուդէ կափտանը ու սկսեց շտապով թափ տալ և կարգի բերել:

— Այ թէ մարդիդ հետ լին ու բոլ քէֆ պիտի անես համ, — ասաց Նիկիտան խոհարարունուն, համաձայն իր այն սովորութեան, որ միշտ, երբ մէկի հետ միայնակ էր մնում, սիրում էր բարեսրտութեամբ մի որ և է բան ասել:

Եւ, մէջքին փաթաթելով նեղ ու քրքրեած գոտին, նա ներս քաշեց իր առանց այն էլ հինար փորը ու քուրքի վրայից գոտին սեղմեց, որչափ որ ոյժ ունէր:

— Այ, այսպէս, — ասաց նա գրեւից յետոյ, խօսքը այս անգամ ուղղելով ոչ թէ խոհարարունուն, այլ գոտուն, նրա ծայրերը կողքերքից ամրայնելով, — այսպէս չնս թոնչի, — յետոյ, ուսերը վեր ու վար շարժելով, որպէսզի ձեռքերը աշտու լինին շարժելու, նա վրայից խալատը հագաւ, մէջքը դարձեալ փորփոշացրեց, որ ձեռքերը ազատ լինեն, թևատակերին խփեց ու պահարանից ձեռնոցները հանեց: — Դէ՛հ, ևս պատրաստ եմ:

— Լաւ կանէիր, Ստեպանիչ, եթէ ոտնամաններդ էլ փոխէիր, — ասաց խոհարարունին, — թէ չէ՛ կօշիկներդ մաշեած են:

Նիկիտան կանգ առաւ, կարծես մի բան մտաբերելով:

— Հա, լաւ կը լինէր... Բայց, այսպէս էլ եօլա կը գնամ, հեռու չէ:

Եւ նա վաղեց բակը:

— Չե՛ս մրսի, Նիկիտուշկա, — ասաց տանտիկինը, երբ նա սահնակի մօտ հասաւ:

— Ի՛նչ մրսել, շատ տաք է, — պատասխանեց Նիկիտան, ուղղելով սահնակի միջի յարդը, որպէսզի նրանով ոտները ծածկի, և յարդի մէջ կոխելով աշխոյժ ձիու համար անսկէտք մտրակը:

Վասիլիյ Անդրէիչը արդէն նստած էր սահնակու: Կրկնակի մուշտակ հագած, իր լայն թիկունքով նա բռնել էր սահնակի ամբողջ կիսակեռ յետի մասը: Նա իսկոյն իր ձեռքը առաւ երասանակները ու քշեց ձին: Նիկիտան հէնց գնալու միջոցին ցատկեց սահնակի մէջ, նստեց առջևից ձախ կողմը և մի ոտը գուրս հանեց:

Բարի ձին սահնակի տակի ձողերի թեթե  
ճաճուցով տեղից շարժեց նրան և աշխոյժ  
բայլւածքով սլացաւ գիւղի ստոած ու սըր-  
ւած ճանապարհով:

— Ի՞նչ էնչ ես կպել: Տուր ինձ մտրակը,  
Միկիտա,— բացականչեց Վասիլիյ Անդրէիչը,  
նկատելով անշուշտ խիստ գոհ սրտով իր  
ժառանգին, որը աշխատում էր սահնակի յե-  
տևում մի կելս պ տեղաւորել ձողերի վրա.—  
Ես բեռ ցոյց կըտամ: Վազիր, գնա փայրի-  
կիդ մօտ, շան լակոտ:

Տղան վայր ցատկեց: Բաշօն արագացրէց  
իր ետրդայ քայլերը և ապա սկսեց վազել:

Գիւղի այն թաղը, ուր Վասիլիյ Անդրէի-  
չի տունն էր գտնուում, մեց տներից էր բաղ-  
կացած: Հէնց որ նրանք անցան վերջին՝  
դարբինի խրճիթը. իսկոյն նկատեցին, որ  
քամին աւելի ուժեղ է, քան իրանք կարծում  
էին: Շանապարհը համարեա թէ այլևս չէր  
երևում: Սահնակի անցած տեղը իսկոյն լըց-

ւում էր ձիւնով և ճանապարհը կարելի էր  
ճանաչել միայն նրանով, որ նա միւս տե-  
ղերից աւելի բարձր էր: Ամբողջ դաշտա-  
վայրի վրա ձիւնը պտոյտ-պտոյտ էր գալիս,  
և բոլորովին չէր նկատուում, թէ որտեղ է  
երկիրը վերջանում ու երկինքը սկսում:  
Տեկատիներն անտառը, որ միշտ շատ լաւ  
տեսնուում էր, այժմ ձիւնի փոշու միջից մի-  
միայն երբեմն էր սևին տալիս: Քամին ձախ  
կողմից էր փչում, շարունակ մի կողմի վրա  
թեքելով Բաշօի գեր ու դուրս կանգնած  
պարանոցի վրայի բաշը, և մի կողմ էր ծռում  
նրա կապ տւած գորշիկ պոչը: Քամու կողմը  
նստած Նիկիտայի երկար օձիքը կպչում էր  
նրա երեսին ու քթին:

— Ձէ կարողանում իր իսկական քայլերով  
վազել, ձիւնը չէ թողնում,— ասաց Վասիլիյ  
Անդրէիչը, պարծենալով իր լաւ ձիովը:—  
Մի անգամ ես Պաշուտինօ զնացի ճէնց սրա-  
նով. կէս ժամուժը հասցրեց:

— Ի՞նչ,— հարցրեց Նիկիտան, չը լսելով  
օձիքի յետևից:

— Ատում եմ, որ Պաշուտինօ կէս ժամուժը  
հասայ,— բղաւեց Վասիլիյ Անդրէիչը:

— Ինչ ասել կուզի, շատ լաւ ձի է,— ասաց  
Նիկիտան:

Նրանք լռեցին: Բայց Վասիլիյ Անդրէիչը ուզում էր խօսել:

— Ըր, կարծում եմ, որ կնոջդ պատերիմել ես տակառագործին չը խմացնի:— Նոյն բարձր ձայնով սկսեց նորից իր խօսակցութիւնը Վասիլիյ Անդրէիչը, միանգամայն հաւատարեցած լինելով, որ Նիկիտայի համար, երևի, խիստ մեծ պատիւ է այնպիսի մի նշանաւոր խելօք մարդու հետ խօսելը, ինչպէս որ ինքն է, և նա այն աստիճան դո՞ էր իր կատակից, որ իսկի գլխովն էլ չէր անցնում, թէ այդ խօսակցութիւնը կարող է դուր չը գալ Նիկիտային:

Նիկիտան նորից չը լսեց տիրոջ ասածը, որովհետը քամին փախցնում էր արտասանւած խօսքերի ձայնը:

Վասիլիյ Անդրէիչը բարձր ու պարզ ձայնով կրկնեց իր կատակը տակառագործի մասին:

— Է՛հ, Աստուած նրանց բարձր տայ: Վասիլիյ Անդրէիչ, ես այդ գործերի մէջ չո՞մ խառնուում: Իմա այն է միտյն, որ կինս ինձ չը վիրաւորի, թէ չէ Աստուած իր հետ:

— Ծիշտ է,— ասաց Վասիլիյ Անդրէիչը:— Ն՞հ, իսկ գարնանը ձի պիտի առնես,— ակնաբանից նա խօսակցութեան առարկան փոխելով:

— Ուրիշ ճար չը կայ,— պատասխանեց Նիկիտան, վերնագգեստի օձիբը ծալելով և թքեւելով դէպի տէրը:

Այլևս խօսակցութիւնը հետաքրքրական էր Նիկիտայի համար և նա ուզում էր ամեն մի խօսքը լսել:

— Տղաս մեծացել է, պէտք է որ ինքնիրս վարենք, թէ չէ միշտ ուրիշին էինք տալիս,— ասաց նա:

— Վատ չեա մտածել,— վերցրէք իմ ետրուն, թանգ չեմ վերցնի,— բղաւեց Վասիլիյ Անդրէիչը, իրան խիստ զգաստացած զգալով, ինչպէս որ սովորաբար նրա հետ լինում էր, երբ կնքիբը իր սիրտը ու իր ամբողջ մտաւոր ոյժերը սպառող պարապմունքի վաշխառութեանն էր վերաբնդում:

— Աւելի լաւ կը լինի, որ դուք կնձ տասնուհինգ բուբլի տաք, ես ձիերի շուկայումը կառնեմ,— ասաց Նիկիտան, շատ լաւ իմանալով, որ ետրուի իսկական գինը, որ Վասիլիյ Անդրէիչը կամենում էր իր գլխին փաթթել. սօթ բուբլի է, իսկ Վասիլիյ Անդրէիչը նրան այդ ձին տալով, պիտի քսանուհինգ բուբլի հաշւէր և այն ժամանակ մի ամբողջ կէս տարի այլևս նրանից փողի երես չը պիտի տեսնէր:

—Լաւ ձի է: Ես քո լաւն եմ ցանկանում, ինչպէս որ ինձ կը ցանկանայի: Խղճով եմ վարւում: Բրիտանոնովը ոչ ոքի վատութիւն չի անի: Աւելի լաւ է, ես վնասեմ, քան այնպէս անեմ, ինչպէս ուրիշներն են անում: Ազնւարար,—բղաւեց նա այնպիսի ձայնով, ինչպէս որ նա սովորաբար աշխատում էր համոզել իր մուշտարիներին: —Ձին իսկական ձի է:

—Կայ էլի,—ասաց Նիկիտան, խորը շունչ քաշելով, և, համոզելով որ այլ ևս լսելու բան չը կայ, ձեռքով բարձրացրեց օձիքը, որ իսկոյն ծածկեց նրա սկանջն ու երեսը:

Կէս մամի չափ նրանք գնում էին լուռ: Քամին սառեցնում էր Նիկիտայի կողքն ու թևը: Ուր նրա բուրբը պատուածքներ ունէր: Նա կուճ էր գալիս ու դերանը ծածկող օձիքի մէջ էր շնչում և այդպիսով նա ամբողջ մարմնով չէր մըտում:

—Նը, ի՞նչ ես կարծում, Կարամիշեվօյի վրայով գնանք թէ՞ ուղղակի,—հարցրեց Վասիլիյ Անդրէիչը:

Կարամիշեվօյի վրայով ճանապարհը աւելի բանուկ էր, երկու շարք լաւ ուղեցոյց ցիցեր կային շարւած, թէև աւելի հեռու

էր: Իսկ ուղղակի աւելի մօտ էր, բայց այդ ճանապարհով անց ու դարձը աւելի քիչ էր և ցիցերն էլ հնացած ու ձիւնով ծածկւած էին:

Նիկիտան փոքրինչ մտածեց:

—Կարամիշեվօյի վրայով թէև հեռու է, բայց ճանապարհը աւելի լաւ է,—ասաց նա:

—Ուղղակի գնալով, հարկաւոր է միայն փոքրիկ ձորը անցնել ու չը խոտորել, իսկ նրանից դէնը՝ անտառի միջով լաւ է գնալը,—ասաց Վասիլիյ Անդրէիչը, որ ուզում էր ուղղակի գնալ:

—Կամքը ձերն է,—ասաց Նիկիտան ու դարձեալ օձիքը բարձրացրեց:

Վասիլիյ Անդրէիչը հէնց այդպէս էլ տրեց. կէս վերստաչափ անցնելուց յետոյ, բարձր: քամուց տատանող կաղնու ծառի մօտ, որի վրա դո՛ւ ևս մի քանի չորացած տերևներ էին մնացել, ձիու գլուխը շուռ տուց դէպի ձախ:

Այդ ծուած տեղից սկսած քամին համարեա թէ նրանց հակառակն էր փչում: Վերևից էլ ձիւն էր գալիս: Վասիլիյ Անդրէիչը վարում էր ձին, թշերն ուրեցնում ու, փնջացնելով, բեխերի տակից էր շունչը բաց թողնում: Նիկիտան նիրհում էր:

Այդպէս լուռ նրանք անցան մօտ տաս  
րոպէ։ Յանկարծ Վասիլիյ Անդրէիչը մի ինչ  
որ բան ասաց։

—Ի՞նչ,—հարցրեց Նիկիտան, աչքերը  
բանալով։

Վասիլիյ Անդրէիչը չէր պատասխանում.  
նա ձուլում, յետ ու առաջ էր նայում, ճա-  
նապարհն էր տնդողում։ Իսկ ձին, որի շե-  
քերն ու վիզը փրփրել էին քրտինքից, այլ  
ևս գնում էր հանդարտ քայլերով։

—Ի՞նչ ասեցիր—կրկնեց Նիկիտան։

—Ի՞նչ, ի՞նչ,—բարկացած ծաղրից նրան  
Վասիլիյ Անդրէիչը։—Յիցեր չեն երևում։  
Երևի, խոտորել ենք։

—Դէ, կանգնիր ուրնմն, մի տեսնեմ ճա-  
նապարհը,—ասաց Նիկիտան և, թեթև  
ցատկելով սահնակից ու յարդի տակից  
մտրակը հանելով, գնաց դէպի ձախ այն  
կողմից, ուր ինքն էր նստած։

Այդ տարին ձիւնը շատ խոր չէր, այն-  
պէս որ ամեն տեղով ճանապարհ կար, բայց  
և այնպէս տեղ տեղ ձիւնը մինչև ծնկներն  
էր հասնում և լցում էր Նիկիտայի կօշիկ-  
ների մէջ։ Նիկիտան այս ու այն կողմ էր  
գնում, ոտներով ու մտրակով շոշափում  
էր, բայց ոչ մի տեղ ճանապարհ չը կար։

—Չը, ի՞նչպէս,—ասաց Վասիլիյ Անդրէի-  
չը, հրը Նիկիտան նորից սահնակին մօ-  
տեցաւ։

—Այս կողմում ճանապարհ չը կայ։ Պէտք  
է գնալ միւս կողմը տեսնել։

—Այ առջևում մի ինչ որ բան է սևին  
տալիս, գնա մի տես,—ասաց Վասիլիյ Ան-  
դրէիչը։

Նիկիտան այնտեղ էլ գնաց, մօտեցաւ  
այն բանին, ինչ որ սևին էր տալիս.  
բայց սևին տողը հող էր, որ բու-  
սած աշնանացան արտից թափել էր  
ձիւնի վրա և սևացրել ձիւնը։ Աջ կողմումն  
էլ վիսարիլայ յետոյ, Նիկիտան վերադար-  
ձաւ սահնակի մօտ, թափ տւեց իր վրայի  
ու կօշիկների մէջի ձիւնը և նստեց սահ-  
նակի մէջ։

—Պէտք է դէպի աջ գնալ,—ասաց նա  
վճռական ձայնով։—Առաջ քամին ձախ  
կողքիս էր փչում, իսկ հիմա ուղղակի դուռն-  
չիս է խփում։ Գնա դէպի աջ,—վճռողակա-  
նապէս ասաց նա։

Վասիլիյ Անդրէիչը լսեց նրան և ուղղեց  
ձին դէպի աջ։ Բայց ճանապարհ այնուա-  
մենայնիւ չը կար։ Այդպէս նրանք գնա-  
ցին մի անժամանակ։ Քամին չէր հան-



դարտում, ձիւնն էլ շարունակում էր գալ:

— Իսկ մենք, Վասիլիյ Անդրէիչ, երևում է բոլորովին խոտորել ենք,— կարծես թէ բաւականութեամբ ասաց յանկարծ Նիկիտան:— Այն ի՞նչ է,— ասաց նա, ցոյց տալով ձիւնի տակից դուրս ցցած սեխն տեղ կարտփիլի կանաչ գլուխները:

Վասիլիյ Անդրէիչը կանգնեցրեց արդէն բոլորովին քրտնած ու ծանր շնչող ձին:

— Ի՞նչ է,— հարցրեց նա:

— Այն, որ մենք Չախարովի դաշտումն ենք գտնւում: Այ թէ ուր ենք եկել:

— Սո՛ւտ է,— բացականչեց Վասիլիյ Անդրէիչը:

— Սուտ չեմ ասում, Վասիլիյ Անդրէիչ, այլ ճիշտ եմ ասում,— ասաց Նիկիտան, — անհնակի ձոձոցից էլ կարելի է հասկանալ, որ մենք կարտփիլիներն վրայով ենք գնում. իրեն այ, կարտփիլի քաղած կանաչ գլուխների կոյտերն էլ: Չախարովի գործարանի դաշտն է:

— Այ թէ ուր ենք խոտորել!— ասաց Վասիլիյ Անդրէիչը:— Ե, ի՞նչպէս անելու է հիմա:

— Էն, որ հարկաւոր է գնալ ուղիղ, ուրիշ ձար չը կայ, անշուշտ մի որ և է տեղ

դուրս կը գանք,— ասաց Նիկիտան:— Եթէ Չախարովի դուրս չը գանք, անշուշտ չէնց իր՝ Չախարովի «խուտորը» դուրս կը գանք:

Վասիլիյ Անդրէիչը լսեց նրան և թողեց ձիւնն գնալու, ինչպէս որ Նիկիտան էր հրամայում: Նրանք այդպէս գնացին բաւականին երկար: Երբեմն նրանք դուրս էին գալիս տերեւաթափ խոտերի վրա և սահնակը զրխկ-զրխկում էր սառած հողակոյտերի վրա, երբեմն ընկնում էին աշնանացան կամ գարնանացան խոզանների մէջ, ուր ձիւնի տակից երևում էին շամուց երբերող ծղոններն ու խոտի արմատները. երբեմն էլ խրւում էին խոր ու ամեն տեղ միատեսակ սպիտակ և հարթ ձիւնի մէջ, որի վրա այլևս ոչինչ չէր երևում:

Ձիւնը մաղւում էր վճրակից, իսկ երբեմն էլ ցածրից էր բարձրանում: Երևում էր, որ ձին յոգնել էր. նրա մազերը քրտինքից միմեանց էին կպել ու փրփրել էին, և նա հանդարտ քայլերով էր առաջ գնում: Յանկարծ նա վայր ընկաւ ու չոգեց մի ինչոր փոսի կամ առուի մէջ: Վասիլիյ Անդրէիչը ուղեց նրան յետ գարձնել, բայց Նիկիտան ըրաւեց նրա վրա.

—Ինչո՞ւ ես արգելում: Քանի որ եկել ենք, պէտք է շարունակել: Դէ՛հ, սիրունիկս, դէ՛հ, դէ՛հ, բալիկս! — Գոռաց նա ձիուն ուրախ ձայնով: գուրս թռչելով սահնակից և ինքն էլ առւի մէջ խրելով:

Ձին գրո՞հ տւեց և իսկոյն գուրս եկաւ մի սառած հողակոյտի վրա: Անշուշտ, դա մի փորած առու էր:

— Ախր էս սրտեղ հնք մենք, — ասաց վասիլի Անդրէիչը:

— Այ կիմանանք, — պատասխանեց Նիկիտան: — Դու բշիբ ձին, կիմանաս. հրեի, մի որեւէ տեղ գուրս կը գանք:

— Ախր սա պէտք է Գորիաչկինոյի անտառը լինի, — ասաց վասիլի Անդրէիչը, ցոյց տալով մի ինչ որ սև բան, որ ձիւնի միջից երևում էր առջևում:

— Այ, կը գնանք ու կը տեսնենք, թէ ինչպիսի անտառ է, — ասաց Նիկիտան:

Նիկիտան տեսնում էր, որ երևացող սև բանի կողմից քամին շուրջաւոր երկարուկ տերևներ էր բերում, ուստի գիտէր, որ դա անտառ չէ, այլ բնակչութեան տեղ է, բայց նա այդ չէր ասում: Եւ յիրաւի, նրանք առւից դէնը հազիւ տասը սաժէն էին անցել, որ դէմ առ դէմ երևացին սևին

տւող ծառերը ու մի ինչոր տխուր ձայն լսեց: Նիկիտան ճիշտ էր գուշակել. դա անտառ չէր, այլ մի շարք բարձրահասակ ուռնիններ, որոնց վրա տեղ-տեղ դեռ դողացող տերևներ էին կախւած: Ինչպէս երևում էր, ուռնինները տնկւած էին կալի առւի երկարութեամբ: Քամուց ոռնացող ուռնիններին մօտենալով, ձին յանկարծ առաջի ոտները սահնակից էլ աւելի բարձր բանի վրա կոխեց, յետևից քաշեց ետի ոտներն էլ ու գուրս եկաւ մի ինչ որ բարձրութեան վրա: ապա ծուեց դէպի ձախ և դադարեց այլևս թաղել ձիւնի մէջ մինչև ծնկները: Դա ճահապօրն էր:

— Ահա և եկանք, — ասաց Նիկիտան, — բայց չը գիտեմ թէ ուր:

Ձին, այլևս առանց խոտորելու, առաջ անցաւ ձիւնով ծածկւած ճունապարտով ու հազիւ էին նբանք բառասուն սաժեն անցել, երբ երևաց կալատեղի ցանկապատի ուղիղ չիժը ձիւնի հաստ շերտով ծածկւած կտուրի տակից, որի վրայից քամին շարունակ ձիւնը ցած էր թափում: Կալատեղը անցնելուց յետոյ, ճանապարհը թեքեց քամու ուղղութեամբ, և նրանք ընկան ձիւնահիւսի մէջ: Բայց առջևում մի փողոց էր երևում երկու

աների մէջտեղով, այնպէս որ, պարզ էր, որ ձիւնահիւսը կազմուել էր կտուրներից թափուած ձիւնից, ուստի անհրաժեշտ էր անցնել նրա վրայով: Եւ յիրաւի, ձիւնահիւսը անցնելով, նրանք փողոց դուրս եկան: Փողոցի ծայրի բակում պարանի վրա քամուց յուսահատ կերպով թափահարուում էր փուած ու սառած լացքը. շապիկներ, մէկը կարմիր, իսկ միւսը սպիտակ, վարտիք, ոտի փաթըթոցներ և մէկ իւրկա: Սպիտակ շապիկը ամենից յուսահատ կերպով էր Փըռ-Փըռուում, թափահարելով իր թևերը:

—Տես, այս տան կինը կամ շատ ծոյն է և կամ մեռնելու վրա է. լացքը տօներին չէ հաւաքել, — առայ նիկիտան, թափահարող շապիկներին նայելով:

## III

Փողոցի սկզբում գեռ էլի քամի կար և ձանապարհի վրայի ձիւնը աւելած էր քամուց. բայց գիւղամիջում այլևս քամի չը կար, սաք և ուրախ էր: Բակերից մէկում շունն էր նաջում, միւսում մի կին, վերարկուն գլխին գցած, որտեղից որ էր վազ աւեց, մտաւ խրճիթը և կանգնեց դռան շէմքի վրա, որպէսզի անցորդներին նայի: Գիւղի միջից աղջիկների երգեր էին լսուում:

Թուում էր, թէ գիւղում քամին էլ, ձիւնն էլ ու ցււրտն էլ աւելի քիչ էին:

—Սա Գրիշկինո է կարծես, — սասց Վասիլի: Անգրէիչը:

—Չէնց նա է, որ կայ, — պատասխանեց Նիկիտան:

Եւ յիրաւի, դա Գրիշկինո գիւղն էր: Դուրս էր գալիս, որ նրանք ձանապարհը խոտորել էին դէպի ձախ և անցել էին մօտ ութը վերստ ոչ այն ուղղութեամբ ինչոր իրանց էր նարկաւոր. բայց և այնպէս դարձեալ ե-

կել հասել էին այնտեղ, ուր որ իրանց էր հարկաւոր: Գրիշկինոյից մինչև Գօրիաշկինօ հինգ վերստ ճանապարհ էր մնում:

Գիւղի մէջտեղում նրանց առաջը ցցւեց մի բարձրահասակ մարդ, որ գնում էր փողոցի մէջտեղով:

—Ո՞վ է եկողը,— ձայն տւեց այդ մարդը, կանգնեցնելով ձին և, իսկոյնեւտ ճանաչելով Վասիլի Անդրէիչին, բռնեց լծափայտից ու, նրա վրա յենւելով, եկաւ հասաւ սահնակին և նստեց եզրի վրա:

Դա Վասիլի Անդրէիչին ծանօթ զիւղացի Իսայն էր, որը ամբողջ շրջանում յայտնի էր իբրև առաջնակարգ ձիու ղող:

—Ա, Վասիլի Անդրէիչի Այդ ո՞ւր բարով, —ասաց Իսայնը, Նիկիտայի բէլին տալով իր բերնից փչող օդու հոտը:

—Պիտի Գօրիաշկինօ գնայինը:

—Այ թէ ուր էք դուրս եկել: Ձեզ հարկաւոր էր Մալախօլօյով գնալ:

—Շատ բան էր հարկաւոր, բայց չէ կարացինք զլուխ բերել, — ասաց Վասիլի Անդրէիչը, կանգնեցնելով ձին:

—Ձիդ շատ լաւն է, ասաց Իսայնը, մի լաւ տնդղելով ձիուն և սովորական շարժումով

բարձրացնելով նրա խիտ պոչի թուլացած կապը մինչև արմատը:

—Ի՞նչպէս, պիտի գիշերէք, ինչ է:

—Ձէ, բարեկամ, ի՞նչ գիշերել. հարկաւոր է անպատճառ գնալ:

—Երևում է, որ հարկաւոր է: Իսկ սա սովորեցից է: Նիկիտա Ստեպանիչը հո չէ:

—Բաս ո՞վ կը լինի:—Դու մեզ էն ասա, հողի ջան, որ մենք նորից չը կորցնենք մեր ճանապարհը այստեղից:

—Ո՞րտեղ պիտի կորցնէք: Ետ դարձրու ձին և գնա փողոցով ուղղակի՝ իսկ այնտեղ, երբ փողոցից դուրս կը գաս, գնա միշտ ուղիւ: Դէպի ձախ չը թեքես: Երբ գիւղի ծայրին հասնես, այն ժամանակ թեքելի դէպի աջ:

—Գիւղի ծայրումը սրտեղ պիտի թեքւել: Ամառնայինս՜ճճ թէ՛ ձմեռնայինով, — հարցրեց Նիկիտան:

—Ձմեռնայինով. հէնց որ դուրս գաս գիւղից, իսկոյն թուփեր կը տեսնես, թուփերի դիմացը մի ուղեցոյց ցից էլ կայ, մի մեծ, գանգուրաւոր կաղննայ ցից, — հէնց այդտեղ էլ պիտի թեքւել:

Վասիլի Անդրէիչը ձին յետ դարձրեց ու բռնեց գիւղամիջով:

— Լաւ կը լինէր, որ գիշերէիք, — կանչեց նրանց յետևից Իսայը:

Բայց Վասիլի Անդրէիչը չը պատասխանեց նրան ու քշեց ձին. հինգ վերստ ուղիղ ճանապարհ անցնելը, որից երկու վերստը անտառի միջով էր, շատ հեշտ էր թւում, նամանաւանդ որ քամին կարծես հանդարտւել էր ու ձիւնն էլ դադարելու վրա էր:

Անցնելով դարձեալ նոյն հարթ ու տեղտեղ նոր թափած աղբերից սևին տուող փողոցով և անցնելով այն բակի մօտով, ուր պարանի վրա լացք էր փռած, որոնց միջից սպիտակ շապիկը արդէն բոլորովին պոկւել էր պարանից և յս էր ընկել մի միայն՝ դեռ պարանի վրա մնացած՝ մէկ սառած քեւի վրա, նրանք նորից դուրս եկան սոսկալի կերպով ոռնացող ուռնիւնների մօտ և իրանց նորից ըաց դաշտի մէջ զգացին՝ Քամին ոչ միայն չէր դադարել, այլ և, թւում էր, էլ աւելի էր սաստկացել: Ճանապարհի ձիւնը ամբողջապէս քամին սրբել տարել էր, և չը խոտորելը այժմ կարելի էր հասկանալ միմիայն ուղեցոյց ցրցերից: Բայց առջևում եղած ցիցերն էլ դժարութեամբ էին նըկատուում, որովհետև քամին հակառակ կողմից էր փչում:

Վասիլի Անդրէիչը աչքերը կիսախուփ էր անում, գլուխն այս ու այն կողմն էր ծռում, ցիցերն էր որոնում, բայց շատ աւելի ձիու գլուխն էր բաց թողնում, նրա զգաստութեանը վստահանալով: Յիրաւի որ ձին չէր խոտորում և գնում էր, երբեմն աջ երբեմն ձախ թերելով, նայելով ճանապարհի դաւարածքներին, որ նա զգում էր իր ոտների տակ, այնպէս որ, չը նայելով ձիւնը վերեւից էր սաստկացել և քամին էլ առջևից, այնուամենայնիւ ցիցերը շարունակ տեսանելի էին կամ աջ և կամ ձախ կողմից:

Այդպէս հազիւ էին նրանք անցել տասնուհինգ, երբ յանկարծ ուղղակի ձիու առջևում երևաց մի ինչ որ սև բան, որ շարժւում էր քամուց վտարուող ձիւնէ շեղ վանդակի մէջ: Այդ ճամբորդներ էին: Բաշտն բոլորովին հասաւ նրանց և ոտներով խփում էր առջևից գնացող սահնակի յետևի ձողերին:

— Քշիր, անցիր... է-էյ! — ձայն էին տալիս սահնակից:

Վասիլի Անդրէիչը քշեց: Սահնակում նըստած էին երեք գիւղացիներ և մի գեղջիկահի: Ինչպէս երևում էր, սրանք տօների առիթով գնացած հիւրեր էին: Գիւղացիներից մէկը մի երկար ճիպոտով խփում էր ձիուկի

ձիւնով ծածկւած յետևին: Երկուսն էլ, ձեռնորը շարժելով, ինչոր բղաւում էին առջևում նստած: Ոտից գլուխ փաթաթւած ու ամբողջապէս ձիւնով ծածկւած գեղջկուհին անշարժ ու զիք նստել էր սահնակի յետևի կողմը:

—Ումոնցից էք,— ձայն տւեց Վասիլիյ Անդրէիչը:

—Ա-ա-ա... ցիններ,— լուեց միայն:

—Ումոնցից, հարցնում եմ:

—Ա-ա-ա... ցիններ!— ամբողջ ոյժով բղաւեց գիւղացիներից մէկը, բայց և այնպէս անհնարին էր լսել, թէ ովքեր են:

—Քշիր! Մի թռչնիւր առաջ ընկնեն,— բղաւում էր միւսը, շարունակ ձիպոտով ձիուն խփելով:

—Երևի, տօնից էք վերադառնում:

—Քշիր, քշիր, Սեօփա, առաջ անցիր, բշիր:

Սահնակները իրարու զարնւեցին իրանց կողքերով, քիչ մնաց որ միմեանց փաթաթւեն, բայց էլի իրարից պոկւեցին, և գիւղացիների սահնակը սկսեց յետ մնալ:

Ամբողջապէս ձիւնում ծածկւած բրդոտ ու փորը ուռած ձիուկը, ցածիկ կամարի տակ հագիւ շուշ ջաշելով, ի զուր վերջին

ջանքերն էր գործ դնում, երևի՛ ճիպոտի հարւածներից փախչելու նպատակով, և կարճիկ ոտներով արագ-արագ փորում էր խոր ձիւնն ու նրան գէպի իր փորի տակը նետում: Նա, ըստ երևոյթին երիտասարդ էր. ցածի շուրթը ձկան նման ներս էր քաշւած. թթածակերը լայնացել ու վախից ականջները յետ էր ծալել: Սահնակները հաւասարւած միջոցին, նրա դունչը մի քանի վայրկեան Նիկիտայի ուսի հաւասարութեամբ մնաց, բայց յետոյ սկսեց յետ մնալ:

—Այ թէ գինին ինչեր է անում,— ասաց Նիկիտան:— Սեղճ ձիուն բոլորովին տանջեցին: Կատարեալ ասիացիներ են:

Մի քանի բոպէ գեռ լսւում էին տանջւած ձիուկի պընչի ֆոֆոտցն ու հարբած գիւղացիներ ի աղաղակները, բայց յետոյ դադարեց ֆոֆոտցը, քիչ յետոյ էլ դադարեցին և աղաղակները: Եւ շուրջը զարձեալ ոչինչ չէր լսւում, բացի ականջների տակ սուլող քամուց ու երբեմն էլ սահնակի կողերի թոյլ ճռճոտցից, երբ նա ճանապարհի խորդ ու բորդ տեղերով էր անցնում:

Այդ հանդիպումը փորրինչ ուրախացրեց ու զարթացրեց Վասիլիյ Անդրէիչին, և նա աւելի համարձակ կերպով քշեց ձիւն, ուշա-

դրութիւն չը դարձնելով ուղեցոյց ցիցերի վրա և աւելի ևս ձիուն վստահանալով:

Նիկիտայի համար գործ չը կար անելու, և նա, ինչպէս և միշտ, երբ այդպիսի դրութեան մէջ էր լինում, սկսեց նիրհել, աշխատելով լրացնել իր պակաս մնացած քունը: Յանկարծ ձին կանգնեց, և Նիկիտան քիչ մնաց վայր ընկնէր, բթովը դէպի առաջ կըտցահարելով:

—Ախր մենք դարձեալ շիտակ չենք դնում,  
—ասաց Վասիլի Անդրէիչը:

—Ի՞նչ կայ որ:

—Յիցերը չեն երևում: Երևի, դարձեալ խոտորն էլ ենք ճանապարհը:

—Եթէ խոտորն էլ ենք, պէտք է փնտռել,  
—կտրուկ ասաց Նիկիտան, վեր կացաւ և նորից իր կիւսամաշ տոնապհանների ծայրերը ներս ծախեց ու Յնթէ քայլերով գնաց ձիւների մէջ փնտռելու:

Նա երկար ման եկաւ. երբեմն կորչում էր աչքից, նորից երևում ու դարձեալ կորչում, բայց վերջապէս վերադարձաւ:

—Այստեղ ճանապարհ չը կայ, գուցէ առաջնորդումս լինի. ասաց նա, սահնակի մէջ նստելով:

Զգալի կերպով սկսել էր արդէն մտթը

ընկնել: Քամին չէր խստանում, բայց և չէր էլ թուլանում:

—Գոնէ այն գիւղացիների ձայները լսէինք,  
ասաց Վասիլի Անդրէիչը:

—Տեսնում էք, չը հասան մեզ, երևի շատ հեռու ենք շեղել: Կարող է պատահել, որ նրանք էլ են խոտորել,—ասաց Նիկիտան:

—Ապա ո՞ր կողմով գնանք,—ասաց Վասիլի Անդրէիչը:

—Պէտք է թողնել, որ ձին ինքը տանի,  
—ասաց Նիկիտան: Նա ճանապարհը կը գտնի: Տուր ինձ երասանակները:

Վասիլի Անդրէիչը մեծ սիրով յանձնեց երասանակները, որովհետև նրա ձեռները արդէն սկսել էին տաք ձեռնոցների մէջ սառչել:

Նիկիտան վերցրեց երասանակները և, միմիայն թոյլ բռնելով, աշխատում էր բոլորովին չը շարժել, շափազանց ուրախանալով իր սիրած ձիու խելքի վրա: Յիրաւի, խելք ձին, երբեմն մի երբեմն միւս կողմը թեքելով մի կամ միւս ականջը, սկսեց յետ դարձնել սահնակը:

—Միայն թէ չը պէտք է խանգարել,—ասում էր Նիկիտան:—Տես, ինչ է անում: Գնա, գնա, ինչպէս որ գիտես: Այդպէս, այդպէս:

Բամին սկսեց յետևից փշել, այլևս ցուրտ չէր:

— Ի՞նչպիսի խելօքն է,— շարունակում էր ուրախանալ ձիու վրա Նիկիտան:— Կիրգիզ կան ուժեղ ձի է, բայց յիմար է: Իսկ սա, նայիր, ինչ է անում ականջներովը: Ոչ մի հեռագիր հարկատու չէ, մի վերստի վրա էլ լսում է:

Եւ զեռ կէս ժամ էլ չէր անցել, երբ առջևում մի ինչ որ սև բան երևաց. կամ անտառ էր, կամ գիւղ: Եւ ձախ կողմում դարձեալ երևացին ցիցերը: Պարզ էր, որ նրանք դարձեալ ճանապարհի վրա էին դուրս եկել:

— Բայց ախր սա կրկին Գրիշկինօ է,— յանկարծ ասաց Նիկիտան:

Յիրաւի, այս անգամ ձախ կողմում էր ճիշտ նոյն կալատեղը, որի վրայից ձիւն էր թափւում, իսկ քիչ հեռու նոյն պարանն էր, իր վրա կախւած սառած լացքով, շապիկներով ու վարտիկով, որոնք շարունակում էին յուսահատ կերպով թափահարել քամուց:

Նորից նրանք փողօցը մտան, նորից զգացին, որ քամին հանդարտ է, տաք է և ուրախ, նորից երևաց աղբով ծածկւած ձա-

նապարհը, նորից լսեցին ձայներն ու հրգերը, նորից հաջաց շունը: Այնչափ արդէն մթնել էր, որ մի քանի լուսամուտներում ճրագներ էին երևում:

Փողօցի կէսում Վասիլիյ Անդրէիչը ձիու գլուխը շուռ տւեց զէպի մի մեծ, երկու տակ աղիւսներով շինւած տուն և կանգնեցրեց դռան առաջ:

Նիկիտան մօտեցաւ ձիւնաթաթախ լուսաւորւած պատուհանին, որի լոյսի տակ պսպղում էին թոչոզ ձիւնի քուլաները, և բաղխեց մտրակի կոթովը:

— Ո՞վ է,— պատասխանեց մի ձայն Նիկիտի կանչին:

— Կրեստովից, Բրեսուենոյներն են, սիրելի բարեկամ,— պատասխանեց Նիկիտան:— Դուրս եկ մի բռնի:

Պատուհանից հեռացան և մի երկու րոպէից յետոյ— լսում էր— նախասենեակի դուռը ուժով բացւեց, յետոյ դբսի դռան աղխը չրխկաց ու, դուռը քամուց զգուշութեամբ բանալով, մի բարձրահասակ, սպիտակ մորուքով ձեր գիւղացի դուրս եկաւ, սպիտակ տօնական շապիկի վրայից մի կարծ քուրք ուսերին գցած, իսկ նրա յետևից էլ



մի երկտասարդ կարմիր շապիկով և կաշուէ կօշիկներով:

—Այդ դժու ես, Անդրէիչ,—ասաց ծերունին:

—Ճանապարհը կորցրեցինք, եղբայր,—ասաց Վասիլիյ Անդրէիչը.—ուզում էինք Գորիաչկինօ գնալ, ձեր գիւղը դուրս եկանք: Այստեղից անցանք գնացինք, նորից ճանապարհը կորցրինք:

—Այ թէ խոտորել էք ճան, —ասաց ծերունին:—Պետրուշկա, գնա, դարձադան բայ արա,—դարձաւ նա կարմիր շապիկաւոր երկտասարդին:

—Այդ կարելի է,—պատասխանեց երկտասարդը ուրախ ձայնով և վազէ: նախասենեակը:

—Ձեռք եկել գիշերելու, հղբայր,—ասաց Վասիլիյ Անդրէիչը:

—Ո՞ւր պիտի գնաք այս գիշեր ժամանակ, մնացէք:

—Ուրախութեամբ կը գիշերէի, բայց պէտք է գնալ: Գործ ունիմ, հղբայր, չէ կարելի:

—Ի՞նչ տաքացիր գոնէ, սամօվարն էլ հէնց պատրաստ է,—ասաց ծերունին.

—Տաքանալ կարելի է,—ասաց Վասիլիյ Անդրէիչը.—սրանից աւելի մութը չէ կարող լինել, լուսնեակը դուրս կը գայ և լոյս կը

լինի: Գնանք ներս, տաքանալ ինչ է, Միկիտ:

—Ի՞նչ կայ որ, տաքանալ էլ կարելի է, —ասաց Նիկիտան, որ խիստ սառել էր և սաստիկ մեծ ցած կութիւն ունէր իր սառած անդամները տաքացնելու:

Վասիլիյ Անդրէիչը ծերունու հետ խրճիթը մտաւ, իսկ Նիկիտան Պետրուշկայի բացած դարձազովը բակը քշեց սահնակը և, նրա ցուցմունքի համաձայն, ձին տարաւ կառատունը. կառատան յատակը ծածկած էր անասունների աղբով: Ձին ներս քշելիս, սահակի բարձր լծաղեղը դէմ առաւ ծածկի տակ ձգւած ձողին: Ձողի վրա արգէն տեղաւորւած հասերը աքաղաղի հետ միասին անբաւականութեամբ կոկոսցին և ճանկերով ամուր բռնեցին ձողը: Անհանգիստ եղած ոչխարները, կճշակներով սառած աղբին տրօփացնելով, մի կողմ հրճուեցին: Շունը, յուսահատ ձայներ արձակելով, վախեցած ու խիստ բարկացած հաջում էր օտարի վրա:

Նիկիտան այդ բոլորի հետ էլ խօսեց. նա ներողութիւն լսողրեց հաւերից, հանգստացրեց նրանց, թէ այլևս չի վրդովի նրանց բունը, յանդիմանեց ոչխարներին, որ նրանք վախենում են, առանց հասկանալու, թէ

ինչից, և շարունակ աշխատում էր ամառնեցանի շահնը, երբ ձին էր տեղաւորում:

—Այ, այսպէս լաւ կը լինի,—ասաց նա իր վրայից ձիւնը թափ տալով:

—Այ թէ բողազը պատում է նա,—աւելացրեց նա շահն մասին:

—Դէ բաւական է: Նո՛ւ, բաւ է, յիմար, բաւ է: Միայն քեզ ևս անհանգստացնում, —ասում էր նա:

—Յո՞ւմ գողեր չկենք, տանու ենք...

—Սրանք, ինչպէս ասած է, ընտանիքի երեք խորհրդատուններն են,—տուաց երիտասարդը, ուժեղ ձեռքով կուտտան ծածկի տակ բոթելով դուրսը մնացած սահնակը:

—Ի՞նչպէս թէ խորհրդատուներ են,—ասաց Նիկիտան:

—Այ, ինչպէս որ Պաուլոսնունն է տպւած. երբ գող է գալիս, շունը հաջում է,—կը նշանակի՛ արթուն կաց, լաւ հսկիր: Աքլարը կանչում է, կը նշանակէ վեր կաց: Կատուն լացում է,—կը նշանակէ թանկագին հիւր պիտի գայ, պատրաստութիւն տես հիրաւ սիրելու,—ասաց երիտասարդը ժպտալով:

Պետրուխան գրագէտ էր և համարեա թէ անգիր գիտէր իր ունեցած միակ գիրքը՝ Պաուլոսնը և սիրում էր, նամանաւանդ

կրբ մի քիչ լսած էր լինում, ինչպէս այժմ էր, այդ պրքից՝ իր կարծիքով դէպքին յարմար՝ ասացածքներ անգիր ասել:

—Այդ ճիշտ է,—ասաց Նիկիտան:

—Կարծեմ ստուել ես, բիձա,—աւելացրեց Պետրուխան:

—Հա, մի քիչ կայ,—ասաց Նիկիտան: Եւ նրանք բակի միջով անցան ու խրճիթը գնացին:

Այն տուճը, ուր իջևանեց Վասիլիյ Անդրէիչը, գիւղի ամենահարուստ տներէց մէկն էր: Այդ ընտանիքը հինգ հողաբաժին ունէր և դեռ ուրիշներէց էլ կապալով հող էր վերցնում մշակելու: Բակում վեց հատ ձի կար, երեք կով, երկու արջար, քսան հատ ոչխար: Ամբողջ ընտանիքը քսան երկու հողուց էր բազկացած. չորս պսակած բրդիքն էին, վեց թոռներ, որոնցից մէկը՝ Պետրոս խահ, պսակած էր, երկու թոռան զաւակներ կային, երեք որբեր և չորս հաղսնիւր իրանց երեսաններով: Այդ այն հազագիւտ տներէց մէկն էր, բրի մէջ դ՛նու բաժանում չը կար: Բայց այդտեղ էլ արգէն մի խուլ, ներքին կուրի աշխատանք կար, որը, ինչպէս և միշտ լինում է, սկսել էր կնիկներէ մէջ. և որը անխուսափելի կերպով պէտք է շուտով վերջանար բուժանումով: Որդիներէց երկուսը Մօսկվայում ջրկիրներ էին, մէկը գիւնուր էր: Տանը այժմ կային՝ ծերունին, նրա պառաւ

կինը, երկրորդ որդին, որ տնտեսութեամբ էր պարապում, և մեծ որդին, որ տօների պատճառով հկել էր Մօսկվայից, ու բոլորէ կնիկներն ու երեսանները: Բացի տնեցիներէց, այդ տեղ հիւր էին և հարևաններէց մէկն ու սանահայրը:

Սեղանի վերևը խրճիթում կախւած էր լուսամտոփով լամպան որ գեղեցիկ կերպով լուսաւորում էր իր տակը գտնւած թէյի պարագաները, օղիով շիշը, մազաները, աղիւսէ պատերը, պատուար անկիւնում կախւած սուրբերի պատկերներն ու որանց երկու կողմի այլ նկարները: Առաջին տեղում, սեղանի կողքին նստած էր՝ միմիայն սև կարճիկ ջուրքի մէջ մնացած՝ Վասիլիյ Անդրէիչը, որն իր սառած բեղերն էր ծծում և իր դուրս ցցւած բազէի աչքերով շուրջ նստած մարդկանցն ու խրճիթն էր դիտում: Վասիլիյ Անդրէիչից բացի, սեղանի մօտ նստած էր ճաղատ գլխով, սպիտակամորուք ծերունի տան տէրը, տանու կարած սպիտակ շապիկով: Նրա կողքին նստած էին՝ տօների պատճառով Մօսկվայից եկած խոշոր կազմւածքով որդին, բարակ չիէ շապիկով, այն միւս, լայնաթիկունը մեծ որդին, որ տանը տըն-

տեսութեամբ էր պարագում, և նիհար կարմրահեր հարեան գիւղացիւն:

Գիւղացիները, օղին խմելուց և ուտելուց յետոյ, հէնց էն է պատրաստուում էին թէյ խմել, սամօվարն էլ արդէն թշուում էր վառարանի մօտ, յատակի վրա դրված: Երկար նստարանների ու վառարանի վրա երկխաններն էին երևում: Անկողնու վրա մի կին էր նստած օրօրոցի մօտ: Պառաւ տանտիկինը, որի երեսը ծածկւած էր ամեն ուղղութեամբ գնացող ու մինչևիսկ շրթները ճլորեցնող կնճիռներով, պատիւներ էր տալիս Վասիլի Անդրէիչին:

Այն բոլորէին, երբ Նիկիտան խրճիթ մտաւ, պառաւ տանտիկինը, մի հաստ շրջից բաժակի մէջ օղի լցնելով, թաւազա էր անում Վասիլի Անդրէիչին:

— Ո՞ր մեղքիւր, Վասիլի Անդրէիչ, չէ կարելի, պէտք է շնորհաւորել, — ասում էր նա: — Խմիր, սիրելի:

Օղու տեսքն ու հողը սաստիկ շփոթեցրին Նիկիտային, մանաւանդ հիմա, երբ նա ստեղծու ու հոգնած էր: Նա դէմքը խոժոռոց և, գլխարկն ու «կաֆտանը» ձիւնից թափ տալուց յետոյ, կանգնեց սուրբերի պատկերների առաջ և, կարծես թէ ոչ ոքի

չը նկատելով, երեք անգամ խաչակնքեց երեսին ու գլուխ տւեց պատկերներին. յետոյ, շուռ գալով ձերուհի տանտիրոջ կողմը, գլուխ տւեց նախ նրան, ապա՝ բոլոր սեղանի կողքին նստողներին, յետոյ՝ վառարանի մօտ կանգնած կնիկներին և, արտասանելով՝ «տօններդ շնորհաւոր», ըսկսեց հանել, առանց աչքը սեղանին գցելու:

— Այ թէ դաւաւակալել ես հմ, բիճա, — ասաց մեծ եղբայրը, Նիկիտայի սառած երեսին, աչքերին ու մորուքին նայելով:

Նիկիտան հանեց «կաֆտանը», նորից թափ տւեց նրան, կախեց վաւարանի մօտ, մեխից և մօտեցաւ սեղանին: Նրան էլ ասաջարկեցին օղի: Տանջալիր ներքին մաքրաման բոպէ էր. քիչ մնաց, որ նա վերցնէր բաժակը ու իր բերնի մէջ շուռ տար հոտաւետ վճիտ հեղուկը: Բայց նա նայեց Վասիլի Անդրէիչին, մտաբերեց իր եղբուն, մտաբերեց օղու տւած կօշիկները, մտաբերեց տակաւագործին, մտաբերեց իր տղին, որին խոստացել էր գարնանը մի ձի առնել, խորը հոգոց հանեց ու հրաժարեց:

— Չեմ խմում, խոնարհաբար շնորհակալ եմ, — ասաց նա, դէմքը կնճուելով, և նստեց երկրորդ լուսամուտի մօտ, նստարանի վրա:

—Բաս ի՞նչու այդպէս,— ասաց մեծ եղ-  
բայրը:

— Հէնց էնպէս, չեմ խմում,— ասաց Նի-  
կիտան, աչքերը վեր չը բարձրացնելով,  
խէթ-խէթ իր նոսր բեղերին ու մորուքին  
նայելով և նրանց վրայի սառուցները հա-  
լեցնելով:

— Նրան չի կարելի,— ասաց Վասիլիյ Ան-  
դրէիչը, խմած բաժակից յետոյ ոչխարի  
մսի պատառը բերանը զննելով:

— Որ այդպէս է, թէյ խմիր,— ասաց սի-  
րալիր պառաւ տանտիկիները,— տեսնում եմ,  
սառել ես, սիրելի: Էդ ինչու էք, աղջիկներ,  
սամովարը ուշացնում:

— Վատրաստ է,— պատասխանեց հարսնե-  
րից ամենաերիտասաւրդը և, մի կողմ գցե-  
լով հաացող սամովարը ծածկող վարագոյ-  
րը, մեծ գժւարութեամբ նրան սեղանին  
մօտեցրից, բարձրացրից ու թրըխկացնե-  
լով, սեղանի վրա դրեց:

Մինչ այդ Վասիլիյ Անդրէիչը պատմում  
էր, թէ ինչպէս իրանք խոտորել էին, թէ  
ինչպէս երկու անդամ միեւնոյն գիւղն էին  
վերադարձել, ինչպէս ճանապարհ էին փընտ-  
ուում, ինչպէս հարբածներին պատահեցին:  
Տանաէրերը զարմանում էին, բացատրում

էին, թէ որտեղ և ինչպէս են խոտորել և  
ովքեր են եղել հանդիպած հարբածները, և  
սովորեցնում էին, թէ ինչպէս պէտք է  
գնալ:

— Այստեղից Մօլչանովկա երեխան էլ  
կարող է գնալ, հարկաւոր է միայն գիւղա-  
ծայրումը ծուել, այնտեղ մի թուփ է երե-  
ւում: Իսկ դուք ծուել էք, զեռ թուփին չը  
հասած,— ասում էր հարեանը:

— Բայց գիշերէիք, աւելի լաւ կը լինէր:  
Հարսները անկողին են պատրաստում,— հա-  
մոզում էր պառաւ տանտիկիներ:

— Առաւօտը շատ վաղ կը գնայիք, լաւ  
բան է,— հաստատում էր ծերունին:

— Զէ կարելի, եղբայր, գործ ունեմ,— աս-  
աց Վասիլիյ Անդրէիչը:— Եորցրած մէկ  
ժամը չէ կարելի մի տարուհի էլ վերա-  
դարձնել,— աւելացրեց նա, յիշելով անտա-  
ռի և այն վաճառականների մասին, որոնք  
կարող էին իր առևտուրը ձեռքից խլել:  
— Տեղ կը հասնենք, չէ,— զիմեց նա Նի-  
կիտային:

Նիկիտան երկար չէր պատասխանում,  
կարծես թէ ամբողջ ժամանակ իր մորուքի  
ու բեղերի սառուցները հալեցնելու մասին  
էր մտածում:

—Միայն թէ նորից չը խոտորենք,—ասաց նա մտալ կերպով:

Նիկիտան մտալ էր, որովհետև սաստիկ օդի էր ցանկանում, և միակ բանը, որ կարող էր նրա այդ ցանկութիւնը հանգցնել, դա թէյն էր, իսկ թէյ էլ գեւ նրան չէին առաջարկել:

—Ձէ՞ որ հարկաւոր է միմիայն մինչև թեքելու տեղը հասնել, իսկ նրանից դէնը չենք խոտորի. անտառով պիտի զնանք մինչև մեր ուզած տեղը,—ասաց Վասիլիյ Անդրէիչը:

—Ձեր գործն է, Վասիլիյ Անդրէիչ. եթէ ցանկանում էք, գնանք,—ասաց Նիկիտան, վերցնելով առաջարկած թէյի բաժակը:

—Թէյը խմենք ու հայգա՛ն:

Նիկիտան ոչինչ չասաց, այլ միմիայն գլուխը թափ տուց և, զգուշութեամբ թէյը բաժակակալէ մէջ լցնելով, սկսեց զսրորու վրա իր՝ աշխատանքից միշտ ուսած մասներով ձեռքերը տաքացնել: Յետոյ, կծելով շաքարի փոքրիկ կտորը, նա գլուխ տուց տանտէրերին և ասաց.

—Ողջ լինէք,— և ներս քաշեց տաքացնող ձեղուկը:

—Եթէ մէկը մեզ ճանապարհ դնէր մինչև

դառնալու տեղը, — ասաց Վասիլիյ Անդրէիչը:

—Ինչու չէ, այդ կարելի է,— ասաց մեծ որդին:—Պետրուխան կը լծի և ճանապարհ կը գցի մինչև դառնալու տեղը:

—Որ այդպէս է, լծիր, եղբայր: Շատ շնորհակալ կը լինեմ:

—Ի՛նչ շնորհակալութիւն, սիրելի,— ասաց սիրալիր տանտիկինը:—Մենք հոգով ուրախ ենք:

—Պետրուխա, գնա լծիր մասակ ձին,— ասաց մեծ եղբայրը:

—Այդ կարելի է,— ասաց Պետրուխան ժպտալով և իսկոյննեա, մեխից պոկելով զխարկը, վազեց լծելու:

Մինչև կը լծէին, խօսակցութիւնը դարձաւ այն մասին, ինչի վրա որ կանգ էին առել, և ըր Վասիլիյ Անդրէիչը պատուհանին էր մօտեցիլ: Մերունին գանգատոււմ էլ՝ հարևան-տանուտէրին իր երրորդ սրբու մասին, որը տօնելի առիթով իրան ոչինչ չէր ուզարկել, իսկ կնոջ համար ֆրանսիական թաշկինակ էր ուզարկել:

—Ձահիլները ձեռքից փախչում են,— ասում էր ծերունին:

—Եւ ի՛նչպէս են փախչում,— ասաց սա-

նահայր-հարեանք,—անտանելի ևն դառել։ Այ, օրինակի համար՝ Դիմօչկինը հօր ձեռքն էր կտարել։ Երևի, շատ խելք ունենալուցն է։

Նիկիտան լուժ էր, մարդկանց գէմքերին նայելով, և կարծես թէ ինքն էլ էր ուզում խօսակցութեանը մասնակցել, բայց ամբողջապէս թէյ խմելով էր զրազւած ու միմիայն գլուխն էր հաւանութեամբ շարժում։ Նա խմում էր բաժակ բաժակի յետեւից և աւելի ու աւելի տաքանում ու զուրն էր գալիս։ Սօսակցութիւնը երկար շարունակում էր միևնոյն նիւթի՝ բաժանումներից առջացած փրօսի մասին, և այդ ոչ թէ մի վերացական խօսակցութիւն էր, այլ խնդիրը վերարեւում էր հէնց այդ օրան մէջ կարարելիք բաժանումին, որ պահանջում էր հէնց այդտեղ նստած ու սնայլ կերպով լուծիւն պահպանող երկրորդ օրգին։ Երևում էր, որ այդ հարցը ընտանիքի ամենահիւանդոտ վէրքն էր, և բոլորն էլ սաստիկ հետաքրքրված էին նրանով. սակայն, քաղաքավարութիւնից ստիպւած, նրանք օտարների առաջ չէին քննում իրանց մասնաւոր գործը։ Բայց վերջապէս ձերուսին չը կարողացաւ համբերել ու արտասուլից ձայնով խօսեց, թէ ինքը չի թոյլ տալ բաժանելու,

քանի որ ինքը կենդանի է, թէ իր տունը հիմա, փառք Աստու շնչելից է, իսկ ևթի, բաժանւեն, բոլորն էլ մուրացկաններ կը դառնան։

—Այ, ինչպէս Մատվէկները, — ասաց հարեանը։— Շնորքով տուն ու տեղ էին, բայց հէնց որ բաժանւեցին,— ոչ ոք էլ ոչինչ չունի։

—Այդպէս ես դու էլ ուզում,— գիմեց ձերունին որդուն։

Որդին ոչինչ չէր պատասխանում, և անյարմար լուծիւն տիրեց։

Այդ լուծիւնը խզեց Պետրուխան, որը արդէն ձին լծել ու զրանից մի քանի բոպ, առաջ վերադարձել էր և ամբողջ ժամանակ ժպտում էր։

—Պատւածն էլ մի այդպիսի առակ ունի,— ասաց նա,— հայրը մի ցախաւել է տւել որդիներին կտարելու։ Մի անգամից չեն կարողացել ցախաւելը կտարել, իսկ ձիւղտները միմեանցից բաժանելով հեշտութեամբ են կտարել։ Նոյնն էլ հիմա է,— ասաց նա, բերանը բաց ժպտալով։— Արդէն պատրաստ է,— աւելացրեց նա։

—Թէ պատրաստ է գնանք ուրեմն,— ասաց Վասիլիկ Անդրէիչը։— Ինչ վերաբերում

է բաժանմանը, դու մի զիջիր, պատի: Դու  
ես վաստակել, դու էլ տէրն ես: Հաշտա-  
լարին զիմիր: Նա կարգը ցոյց կը տայ:

—Այնպէս է պոթ-պոթացնում, այնպէս  
է պոթ-պոթացնում,—շարունակում էր լալ-  
կան ձայնով իրանը ստել ծերունիին,—սը  
անհնարին է նրա հետ հաշտ ապրելը: Կար-  
ծես դե ա կտրել:

Այդ միջոցին Նիկիտան, վերջացնելով հինգ-  
կորոզ բաժակ թէյը, այնուամենայնիւ չը  
կործեց բաժակը, այլ գրեց նրան կողքի  
վրա, յուսալով, թէ վեցերորդ բաժակն էլ  
կը լցնեն: Բայց սամովարում արդէն ջուր  
չը կար, և տանտիկինը այլևս չը լցրեց:  
Այդ ժամանակ Վասիլիյ Անդրէիչն էլ սկսել  
էր հագնուել: Ուրիշ ճար չը կար, Նիկիտան  
էլ վեր կացաւ: Նա շաքարամանի մէջ գրեց  
չորս կողմից կծած իր շաքարի կտորը, փե-  
շովը սրբեց երեսի քրտինքը և գնաց խա-  
լատը հագնելու:

Հագնելուց յետոյ, նա ծանր յառաջեց և,  
չնորհակալու թիւն յայտնելով տան տէրերին  
ու մնաք բարի ստելով նրանց, դուրս եկաւ  
տաք ու լոյս սենեակից մութ ու ցուրտ  
նախասենեակը, որի խախուտ դռան ձեղ-  
քերից քամին ու ձիւնը վըզ-վըզալով ներս

էին մտնում: Այդ տեղից էլ նա դուրս եկաւ  
բոլորովին մութ բակը:

Պետրուխան քուրքը հագին իր ձիւն հետ  
կանգնած էր բակի մէջ տեղում և, ժպտա-  
լով, Պաուլսոնից ոտանաւորներ էր ասում:  
Նա ասում էր. «Буря мглою небо кроетъ,  
вихри снежкие крутя; то какъ звѣрь она  
завоетъ, то заляцетъ какъ дитя»:

Նիկիտան հաւանութեան նշաններ էր ա-  
նում գլխովը և երասանակներն էր ջսկում:  
Ծերունիին, դուրս գալով ճանապարհ գցե-  
լու Վասիլիյ Անդրէիչին, հետը լապտեր  
դուրս բերեց և կամենում էր լուսւորել,  
բայց քամին իսկոյն հանդցրեց լապտերը:  
Մինչևիտակ բակումն էլ նկատելի էր, սը մըր-  
րիկը աւելի է սաստկացել:

—Սյ թէ եղանակ է, հա,—մտածեց Վասիլիյ  
Անդրէիչը,—ո՛վ զիտէ, տեղ չը հասնենք,  
բայց չի կարելի, գործ ունեմ: Հիմա արդէն  
մնալն էլ անյարմար է, տանտիրոջ ձին էլ է  
լուսած: Կը հասնենք, Աստուած ողորմած է:

Ծերունի տանտէրն էլ էր մտածում, թէ  
չը պէտք էր գնալ, բայց ինքը արդէն ա-  
ռաջարկել էր մնալու, չը լսեցին: Չարժէ  
նորից ինդրել: «Գուցէ, ծերութեանս պատ-



ճատով եմ ես վախենում, իսկ նրանք տեղ  
կը համենն, — մտածում էր նա: — Այսպէս ա-  
ւելի լաւ է, ժամանակին կը պարկենք քնելու:  
անհանգիստ չենք լինի»:

Իսկ Պետրուխան իսկի չէր էլ մտածում  
վտանգի մասին. նա անյնպէս լաւ գիտէր ճա-  
նապարհն ու բոլոր տեղերը: Բացի գրանից՝  
այն ստանաւորը, թէ «Вуря милою небо  
кросеть» նրան սաստիկ ոգևորում էր, նը-  
կատելով, որ դա հէնց այն է արտայայ-  
տում, ինչ որ այժմ կատարում է դուրսը:  
Իսկ Նիկիտան ըստրովին չէր ցանկանում  
դնալ, ըսոյց նա արդէն վաղուց էր սովորել,  
որ ինքը կարծիք չը պիտի ունենայ և ու-  
րիշներին պիտի ծառայի: Այդպիսով ոչ որ  
չը խանգարեց գնացողներին:

## V

Վասիլիյ Անդրէիչը մտեցաւ սահնակին,  
մթութեան մէջ զժւարութեամբ ջոկելով,  
թէ որտեղ է նա, բարձրացաւ, նստեց ու և-  
րասանակները իր ձեռքն առաւ:

— Ինչ գնա առջևից, — ձայն տուց նա:

Պետրուխան, որ ծնկների վրա կանգնել էր  
իր սահնակի մէջ, ըաց թողեց իր ձիու գլուխը:  
Բաշոն, որ իր առջևում կանգնած մատակ  
ձիու հոտը առնելով արդին վաղուց էր սկսել  
խրինջալ, թափով յարձակեց նրա ետևից,  
և նրանք դուրս եկան փողոց: Նրանք՝ դար-  
ձեալ գնացին գիւղի միջով ու նոյն ճանա-  
պարհով, դարձեալ անցան այն բակի մօտով  
ուր ըացք էր փռած, ըաց այս անգամ  
այլևս չէր երևում, անցան նորից կալտան  
մօտով, որը արդէն համարեա թէ մինչև  
կառուրը թաղել էր ձիւնի մէջ և որի վրայից  
անվերջ ձիւն էր թափւում. նորից անցան  
նոյն տխուր աղմկող, շրվշրվաղնոզ ու դէս  
ու դէն գալարուղ ուռնիների մօտով, և

կրկին անգամ դուրս եկան նոյն ձիւնապատ,  
վերևից ու ցածրից ալեկոճած ծովը: Քա-  
մին այն աստիճան խիստ էր, որ, երբ կող-  
քից էր փչում ու, առազաստներ Նման,  
ուռեցնում էր նրանց փեշերը, սահնակը մի  
կողմի վրա էր լինում և ձիուն էլ դուրս էր  
գցում ճանապարհից: Պետրուխան գնում էր  
առջևից, վազեցնելով իր քաջ մատակ ձին,  
և աշխոյժ ձայներ էր արձակում: Բաշօն էլ  
յետևից աշխատում էր նրան համներ:

Մօտ տաս քօպէ այդպէս անցնելուց յե-  
տոյ, Պետրուխան շուտ եկաւ և մի ինչ որ  
բան ասաց բղաւելով: Ոչ Վասիլիյ Անդրէիչը  
և ոչ էլ Նիկիտան շը հասկացան քամու  
պատճառով. այլ գուշակեցին միայն, որ հա-  
սել են թեքւելու տեղը: Եւ յերաւի, Պե-  
տրուխան ծոկեց գէպի աջ և քամին, որ մինչ  
այդ ժամանակ կողքից էր փչում, սկսեց  
ձիւն առջևից փչել, և աջ կողմում ձիւնի  
միջից մի ինչ որ սև բան երևաց: Դա զսու-  
նալու տեղում եղած թուփն էր:

— Դէ՛հ, Տէր ընդ ձեզ.

— Շնորհակալ ենք, Պետրուխա:

— Буря много небо кроет. — կանչեց  
Պետրուխան և անյետացաւ:

— Ինչ շահերն է եղել սա, — ասաց Վասի-

լիյ Անդրէիչը և շարժեց ևրասանակները  
— Հա, լաւ դոշազն է, իսկական գիւղացի,  
է, — ասաց Նիկիտան:

Շարունակեցին ճանապարհը:

Նիկիտան, փաթաթւած ու գլուխը ուսերի  
մէջ խրած, որպէսզի իր նոսր մօրուքը կա-  
րողանայ վիզը ծածկել, նստել էր լուռ, աշ-  
խատելով չկորցնել խրճիթում թէյի ժամա-  
նակ հաւարած տաքութիւնը: Նա իր առջե-  
ւում տեսնում էր լծափայտերի ուղիղ գծերը,  
որ շարունակ շփոթեցնում էին նրան, կար-  
ծել տալով, թէ դա յարդ ճանապարհն է.  
տեսնում էր ձիւն շարժուող յետևը, նրա մի  
կողմ ոլորած ու կապ աւած պոչը, իսկ նրա-  
նից առաջ, քիչ աւելի հեռու, տեսնում էր  
բարձր լըծաղեղը և ձիւն շարժուող գլուխն ու  
վիզը, վրայի տատանուող բաշօն: Երբեմն էլ  
նրա աչքովն էին ընկնում ուղեցուցից ցիցերը,  
որոնց հասկանում էր, թէ առաջժա՛ ուղիղ  
ճանապարհովն են գնում, ուրեմն ինքը ու-  
չինչ անելիք չունի:

Վասիլիյ Անդրէիչը վարում էր, թոյլ թող-  
նելով ձիուն, որ ինքը գնայ ճանապարհով,  
ինչպէս որ գիտէ: Բայց Բաշօն, չը նայե-  
լով որ գիւղում հանգստացել էր, յաճու-  
թեամբ չէր վազում և կարծես թէ շիղուում

էր ճանապարհից, այնպէս որ Վասիլիյ Անգրէիչը մի քանի անգամ ուղղեց նրան:

—Ահա աջ կողմում մէկ ցից, այ երկրորդը, ահա և երրորդը, — համրում էր Վասիլիյ Անգրէիչը, — ահա, առջևում էլ անտառը, — մըտածեց նա, զննող հայացք գցելով առջևում սեխն առող մի ինչոր բանի վրա: Բայց այն, ինչ որ նրան անտառ էր թւացել, միայն թուփեր էին: Անցան թուփերը, անցան էլի 20 սածէն, բայց ոչ չորրորդ ցիցն էր երևում և ոչ անտառը: «Հիմա պէտք է անպատճառ անտառ լինի», մտածում էր Վասիլիյ Անգրէիչը և, օգուռ ու թէյի ազդեցութեամբ գրգռւած, առանց կանգ առնելու շարունակ շարժում էր երասանակաւորը, իսկ հնազանդ ու բարբի կենդանին էլ լսում էր նրան և, երբեմն հոգաւ, երբեմն կամաց վաղելով զընում էր այն կողմը, ուր որ իրան քշում էին, ինչէն ինքը շատ լաւ էր հասկանում, որ իրան բոլորովին այն կողմը չեն քշում, ուր որ հարկաւոր է: Անցաւ մօտ տասը բոպէ, բայց անտառ չը կար:

—Ախր մենք նորից խոտորել ենք, — ասաց Վասիլիյ Անգրէիչը, ձին կանգնեցնելով: Նիկիտան լուռ ցած իջաւ սահնակից և, պինդ բռնելով իր խալաւորը, որը քամուց

կամ մարմնին էր կպչում և կան շուռ էր գալիս ու վրայիցը պոկւում, գնաց ձիւնների մէջ փնտռելու: Գնաց մի կողմը, գնաց միւս կողմը, մի երեք անգամ բոլորովին աչքից կորաւ, վերջապէս վերադարձաւ ու երասանակները առաւ Վասիլիյ Անգրէիչի ձեռքից:

—Գէտք է գէպի աջ գնալ, — ասաց նա խիստ ու վճռողական ձայնով, դարձնելով ձին:

—Ի՛նչ որ գէպի աջ պիտի գնալ, դու էլ քշիլ գէպի աջ, — ասաց Վասիլիյ Անգրէիչը, երասանակները յանձնելով և սաւած ձեռքերը թևերի մէջ կոխելով:

Նիկիտան չէր պատասխանում:

—Ի՛նչ, բարեկամս, նեղութիւն քաշիլ, — ձայն աւեց նա ձիուն, բայց ձին, չը նայելով նրասանակների շարժումներին, հանդարտ քայլերով էր միայն գնում:

Ձիւնը սեղ-տեղ միջև և ձիու ծնկներն էր հասնում, և սահնակը ձիու ամեն մի շարժումի հետ ուտիւններ էր անում:

Նիկիտան հանեց սահնակի առջևում կախւած մտրակը և հարւածեց: Մտրակին անսովոր բարբի ձին ձիգ առեց ու սկսեց վաղել, բայց շատ շուտով քայլւածքը փոխեց կորզայի և ապա հանդարտ քայլերի: Այդպէս

նրանք զնացին մօտ հինգ ըսպէ: Այնպէս մուժն էր և այնպէս ծխում էր վերեւից ու ցածից, որ երբեմն լըծաղեղն էլ չէր երևում: Թւում էր, որ երբեմն սահնակը կանգնած է միևնոյն տեղում, իսկ զաշտը գէպի յետ է վազում: Ձին յանկարծ մէկ անգամից կանգ առաւ, երևի մի ինչ որ վտանգ նկատելով առջևում: Նիկիտան նորից, երասանակները ձեռքից թողնելով, ցած թռաւ սահնակից և զնաց ձիու առջևից տեսնելու, թէ ինչու նա կանգնեց: Բայց հէնց որ նա ուզեց ոտը ձիուց մի քայլ աւելի առաջ զնել, նրա ոտներն սլքեցին և նա զլորեց մի ինչ որ զանիվայրի աակ:

—Տպուռ, տղուռ, տպուռ,— ասում էր նա ինքն իրան, զլորելով և աշխատելով կանգ առնել, բայց չէր կարողանում իրան բռնել և նա կանգ առաւ միայն այն ժամանակ, երբ նրա ստները խրեցին զանիվայրի ցածրում կուտակեամ ձիւնի հաստ շերտի մէջ:

Չառիվայրի եղբրքից կախած ձիւնակոյաքը, Նիկիտայի զլորելուց խախտելով, թափեց նրա վրա և լցեց նրա վիզը:

—Այ թէ ինչ արեցիր,— յանդիմանական եղանակով սասց Նիկիտան, ձիւնակոյտին

ու զառիվայրին զառնայով և վզի միջից թափ տալով ձիւնը:

—Նիկիտ, այ Նիկիտ,— կանչում էր Վասիլիյ Անդրէիչը վերեւից: Բայց Նիկիտան ձայն չէր տալիս:

Նա զբաղեւած էր. վրաից ձիւնն էր թափ տալի, յետոյ մտբակն էր որոնում, որ վայր էր պցել զառիվայրի տակը զլորելիս: Մտբակը գտնելով, նա ուզ'ց նոյն ուղիղ գծով վեր բարձրանալ, որտեղով որ ցած էր զլորելը, բայց այդ տեղով վեր բարձրանալը անհնարին էր. նա նորից ցած էր զլորում, ուստի ստիպեւած էր ցածրով զնալ մինչև որ մի ուրիշ ելք կը գտնէր վեր բարձրանալու: Իր վայր զլորեւած տեղից մօտ երեք սաժեն այն կողմը նա հագիւ կարողացաւ, չոչ տեսնելով. վեր բարձրանալ զառիվայրի զլուխը և նրա եղերքով մօտե՛ալ այն տեղին, ուր որ ձին պէտք է կանգնած լինէր: Բայց նա չը տեսաւ ոչ ձին և ոչ էլ սահնակը: Սակայն, որովհետև նա քամու հակառակ էր գնում, ուստի, նախ քան նրանց տեսնելը, նա լսեց Վասիլիյ Անդրէիչի աղաղակն ու Բաշօի խրխնջոցը, որ իրան էին կանչում:

—Գալիս եմ, գալիս եմ, ի՞նչ ես կրկչում, —ասաց նա:

Սահնակին բոլորովին մօտենալուց յետոյ միայն, նա տեսաւ ձին և նրա կողքին կանգնած Վասիլիյ Անդրէիչին, որը մի հսկայ բան էր երևում:

— Այդ ո՞ւր, գրողի ծոցը կորար: Պէտք է վերադառնալ: Թէկուզ Գրիշկինօ վերադառնանք, — բարկացած սկսեց Նիկիտային յանդիմանել տէրը:

— Յոժարութեամբ կը վերադառնայի, Վասիլիյ Անդրէիչ, բայց ի՞նչպէս գնալ: Այստեղ մի այնպիսի մեծ ձուր է, որ եթէ մէջը ընկնես, էլ չես կարողանայ գուրս գալ: Ես այնպէս գլորւեցի նրա մէջ, որ հազիւ կարողացայ գուրս պրծնել:

— Ապա ի՞նչ անենք, իստ՝ չենք կարող այստեղ կանգնել: Պէտք է մի տեղ գնալ թէ՛ չէ, — ասաց Վասիլիյ Անդրէիչը:

Նիկիտան ոչինչ չէր պատասխանում: Նա նստեց սահնակի մէջ յետը դէպի քամուկ կողմը շուռ տալով, հանեց կօշիկները, թափ տուեց նրանց մէջը լցւած ձիւնը, և ապա, գուրս քաշելով սահնակի միջի յարդիցը, խնամքով ներսից խցկեց ձախ կօշիկի ծակը:

Վասիլիյ Անդրէիչը լսել էր, կարծես թէ այժմ ամեն ինչ Նիկիտայի կամքին էր թու-

ղել: Կօշիկները նորից հագնելուց յետոյ, Նիկիտան հաւաքեց ոտները սահնակի մէջ, հագաւ նորից ձեռնոցները, վերցրեց երասանակները և շուռ տուեց ձին ձորի երկարութեամբ: Բայց նրանք հարիւր քայլ էլ զեռ չէին անցել, երբ ձին նորից չուղեց գրնալ: Նրա առջևում զարձեալ ձոր էր:

Նիկիտան նորից ցած իջաւ ու գնաց ձիւնների մէջ փնտռելու: Բաւական երկար ման եկաւ նա: Վերջապէս վերադարձաւ իր գնացածի ճիշտ հակառակ կողմից:

— Անդրէիչ, կենդանի՞ ես, — կանչեց նա:

— Այստեղ եմ, — պատասխանեց Վասիլիյ Սնդրէիչը: — Է, ի՞նչ կասես:

— Անհնարին է բան հասկանալ: Մու՞տն է: Ի՞նչ որ ձուրեր են: Պէտք է նորից քսուի հակառակ գնալ:

Նորից գնացին, նորից Նիկիտան գնաց ձիւնների մէջ ճանապարհ փնտռելու: Նորից նստեց, նորից իջաւ ու փնտռեց և վերջապէս, շունչը կտրած, կանգնեց սահնակի մօտ:

— Է, ի՞նչ կասես, — շարքեց Վասիլիյ Անդրէիչը:

— Ի՞նչ պիտի ասեմ, բոլորովին շնչապառ եղայ: Ձին էլ նոյն դրութեան մէջ է ընկնում:

—Այ, սպասիր:

—Ապա ի՞նչ անելու է:

Նիկիտան դարձեալ գնաց և շուտով վերադարձաւ:

—Քշիր իմ յետևից,—ասաց նա, ձիու առջը անցնելով:

Վասիլիյ Անդրէիչը այլևս ոչինչ չէր հրամայում, այլ հնազանդութեամբ անում էր, ինչոր Նիկիտան էր նրան ասում:

—Այս կողմը, իմ յետևից,—ձայն տւեց Նիկիտան, շտապով դէպի աջ թեքւելով և Բաշօի սանձից բռնելով ու նրան ուր որ դէպի ցած, ձիւնակոյտի մէջ ուղղելով:

Ձին սկզբում չուզեց գնալ, բայց յետոյ ձիւ տւեց, յուսալով թէ ձիւնակոյտի վրայից կը ցատկի, բայց ոյժը չը պատեց ու խրւեց ձիւնի մէջ մինչև շրջակայքը:

—Յո՛ւժ ի՛ջիր,—գոռաց Նիկիտան Վասիլիյ Անդրէիչի վրա, որը շարունակում էր սահնակի մէջ նստած մնալ, և ուսը դէմ տալով լծափայտերից մէկին, սկսեց սահնակը ձիւնն մօտեցնել:— Դժւար է, սիրելիս,—դիմեց նա Բաշօյին,—բայց ի՞նչ արած, ոյժ տուր մի քիչ. դէ՛հ, դէ՛հ, մի քիչ էլ,—գոռաց նա:

Ձին ոյժ տւեց մի, երկու անգամ, բայց այնուամենայնիւ չը կարողացաւ դուրս գալ

ու նորից նստեց, կարծես թէ մի բան էր մտածում:

—Ի՛նչ արած, կղբայր, դժւար է,—յորդորում էր Նիկիտան ձիւնն:

—Դէ՛հ, մի անգամ էլ:

Նիկիտան դարձեալ լծափայտը առաջ քաշեց. Վասիլիյ Անդրէիչը նոյնն էր անում միևս կողմից: Ձին գլուխը շարժեց և յետոյ յանկարծ ձիւ տւեց:

—Դէ՛հ, դէ՛հ, չես խեղդւի, մի վախենա,—գոռում էր Նիկիտան:

Ձին ձիւ տւեց երկրորդ, երրորդ անգամը և վերջապէս դուրս եկաւ ձիւնակոյտի միջից ու կանգնեց, ծանր շունչ քաշելով և ինքն իրան թափահարելով: Նիկիտան ուղում էր ձին աւելի հեռուն քաշել, բայց Վասիլիյ Անդրէիչը իր երկու մուշտակների մէջ աջն պէտք չնշաւ պահ հետ մէջ էր, որ անկարող էր գնալ ու վայր ընկաւ սահնակի մէջ:

—Թող մի շունչ քաշեմ է,—ասաց նա, առձակելով իր վրի թաշկինակը, որ նա գլուղումը կապել էր մուշտակի վրայից:

—Այստեղ ոչինչ. գու պարկիր,—ասաց Նիկիտան,—ես կը քաշեմ,—և, թողնելով Վասիլիյ Անդրէիչին սահնակի մէջ պարկած մնալ, ինքը, ձիու սանձը բռնած, քաշեց

սահնակը մի տաս քայլ զէպի ցած և ապա մի քիչ էլ զէպի վեր ու կանգնեց:

Նիկիտայի կանգնած տեղը փոս տեղ չէր, ուր ձիւնակոյտերից աւելած ձիւնը կարողանար հաւաքել ու նրանց տակով անել. ընդհակառակը՝ ձորի եզերքը կարող էր նրանց զեռ էլի մասամբ պաշտպանել քամուց: Լինում էին բոպէներ, երբ քամին կարծես թէ մի քիչ հանդարտում էր, բայց դա երկար չէր տևում, և, կարծես թէ հէնց այդ հանդարտ ընդմիջումների տեղը լրացնելու համար, յետոյ փոթորիկը տասնապատկած ոյժով էր յարձակում և աւելի մեծ կատաղութեամբ էր ամենինչ պոկում ու գալարեցնում: Այդպիսի մի կատաղի հորձանք յսփեց հէնց այն բոպէին, երբ Վասիլիյ Անդրէիչը, փոքր ինչ շունչ առնելուց յետոյ, դուրս եկաւ սահնակից ու մօտեցաւ Նիկիտային, խօսելու համար, թէ ի՞նչ անելու է: Նրկուան էլ բնազդաբար կռայան ու ձայները կտրեցին, սպասելով, որ փոթորկի կատաղութիւնը անցնի: Բաշօն էլ դժգոհութեամբ ծալում էր ականջները ու գլուխն էր թափահարում: Հէնց որ փոքր ինչ քամու կատաղութիւնը անցաւ, Նիկիտան հանեց իր ձեռնոցները և, խրե-

լով նրանց դուռու տակը, փչեց ձեռքերի մէջ ու սկսեց լծաղեղից լիամը արձակել:

— Այդ դու ի՞նչ ես անում, — հարցրեց Վասիլիյ Անդրէիչը:

— Ձին արձակում եմ, էլ ի՞նչ պիտի անել: Էլ ուժ չը մնաց մէջս, — պատասխանեց Նիկիտան, կարծես ներսդուրիւն խնդրելով:

— Միթէ չե՞նք կարողանայ մի որեէ տեղ համնել:

— Չենք կարողանայ, ի դուր տեղը ձին պիտի տանջենք: Ախր խեղճ անասունի հոգին դուրս եկաւ, — ասաց Նիկիտան, ցոյց տալով հնազանդութեամբ ու ամեն բանի համար պատրաստ կանգնած ձիւն վրա, որի թաց կողերը ծանր շնչատութիւնից բիշ էր մնում դուրս պրծնէին: — Պէտք է շիշերել, — ասաց նա այնպիսի ձևով, որ կարծես թէ պատրաստում էր օթեանում զիշերել, և սկսեց լծակապը արձակել:

Լծափայտերը բաժանեցին միմիանցից:

— Բայց մենք չե՞նք սառի, — ասաց Վասիլիյ Անդրէիչը:

— Ի՞նչ արած, եթէ սառենք էլ, պիտի մնանք, — ասաց Նիկիտան:

Վասիլիւ Անդրէիչը իր երկու մուշտակներէ  
րի մէջ իրան բոլորովին տաք էր զգում, մա-  
նաւանդ ձիւնակոյտի մէջ աշխատելուց յե-  
տոյ, բայց նրա մէջքովը մի սառսուռ ան-  
ցաւ, երբ իմացաւ որ յերաւի պէտք է այդ-  
անդ գիշերել: Իրան նանգատացնելու համար,  
նա նստեց սահնակի մէջ ու սկսեց պապի-  
րոսներ և լուծկի հանել:

Մինչ այդ Նիկիտան ձին էր արձակում:  
Նա արձակեց ձիու չորքաշը, կիսի վրայից  
անցնող կաշին, արձակեց երասանակները,  
հանեց օդակը, շուռ աւեց լծաղեղը և, չը  
զադարեւելով ձիու հետ խօսելը, խրախուսում  
էր նրան:

— Դէ, դուրս եկ, դուրս եկ, — ասում էր նա,  
լծափայտերի մէջտեղից դուրս հանելով ձին:  
— Այ, քեզ հիմա այտտեղ կը կապենք: Տակդ  
դարման կը գցեմ ու ստնձղ էլ կը հանեմ, —

ասում էր նա, միևնոյն ժամանակ անելով,  
ինչոր ասում էր: — Մի քիչ բան կուտես և  
քեզ աւելի լաւ կը զգաս:

Բայց Բաշօն, երևում էր, չէր հանգստա-  
նում Նիկիտայի խօսքերից և շատ անհան-  
գիստ էր, նա մերթ մի, մերթ միւս ոտի վրա  
էր կանգնում, գնում սեղմուում էր սահնակին,  
յետևը քամու կողմը շուռ տալով, և զլուխը  
Նիկիտայի թևերին էր քսում:

Կարծես թէ Նիկիտայի խաթըը չը կոտ-  
րելու համար, որ նրան դարման էր համե-  
ցէք անում, դնչին մօտեցնելով, Բաշօն մէկ  
անգամ սահնակի միջից մի փունջ դարման  
խլեց, բայց իսկոյնսկատ, որոշելով, թէ հի-  
մա դարման ուտելու ժամանակ չէ, փունջը  
բերնից բաց թողեց, որ և քամին անմիջա-  
պէս ցրեց ու տարաւ ձիւնի երեսին փոսց:  
— Հիմա նշան շինենք, — ստաց Նիկիտան,  
սահնակը առջևը կողմով դէպի քամին շուռ  
տալով, և լծափայտերը կիսի վրայից անց-  
նող կաշիով միմեանց կապելով, նա դէպի վեր  
բարձրացրեց լծափայտերը ու կապեց սահ-  
նակից: — Այ, եթէ մեզ ձիւնը տակով անի,  
բարի մարդիկ լծափայտերից մեզ կը նկա-  
տեն ու դուրս կը հանեն, — ստաց Նիկիտան,  
ձեռնոցները միմիանց խփելով ու կրկին



հազնելով:—Այսպէս են մեզ ձերերը խրատուել:

Մինչ այդ Վասիլիյ Անդրէիչը, մուշտակի կոճակները բաց թողած ու փեշերովը պատուար շինած, միմեանց յետեից պողպատե ամանին էր քսում քուքուրթէ լուծկիները. սակայն նրա ձեռները դողում էին, և վառւած լուծկիները միմեանց յետեից, պապիրոսին մօտեցրած բոպէինչ հանդում էին քամուց: Վերջապէս, լուծկիներէից մէկը ամբողջապէս վառւեց ու մի վայրկեան լուսաւորեց նրա մուշտակի մորթին, ծալւած ցուցամատի վրայի ոսկէ մատանին և կտաւէ հարսաւի տակից դուրս թափւած ու ձիւնով ծածկւած վարտակի յարդը, և պապիրոսը վառւեց: Արեւկուտնդամ նա տղահուիկամբ ձուկը ներս քաշեց, կուլ աւեց ու բեղերի միջից դուրս թողեց. Ուրեց էլի քաշել, բայց քամին թափով պահեց թութուենն ու կրակը և տարաւ այնտեղ, ուր ուր դարմանն էր տարել:

Բայց թուիւննի այդ մի քանի կում ձուկն էլ Վասիլիյ Անդրէիչի արամադրութիւնը լաւացրին:

—Դէ՛հ որ գիշերելու է, գիշերենք,—ասաց նա վճռողապէս:

—Սպասիր, ես մի դրօշակ էլ շինեմ,—աւելացրեց նա, վերցնելով այն թաշկինակը, որ նա, վզից արձակելով, սահնակի մէջն էր գցել, և ապա, հանելով ձեռնոցները, կանգնեց սահնակի նզրին ու, ամբողջ մարմնով ձգւելով, որպէսզի կարողանայ ձեռքը լծափայտերի ծայրին հասցնել, թաշկինակը ամուր կապեց լծափայտին:

Թաշկինակը լակոյն սկսեց յուսահատ կերպով թափահարւել, մէկ լծափայտին կաշեւում, մէկ էլ յանկարծ ուռչելով, ձգւելով ու չրխկ-չրխկացնելով:

—Այ, ի՛նչ յաջող դուրս եկաւ,—ասաց Վասիլիյ Անդրէիչը, իր կատարած գործից չըրճւելով և սահնակի մէջ իջնելով:

—Միասին աւելի տար կը լինի, բայց երկուսով չէնք տեղաւարել,—ասաց նա:

—Ես ինձ համար տեղ կը գտնեմ.—պատասխանեց Նիկիտան,—միայն թէ ձին լաւ ծածկես, թէ չէ՛ կը մրսի խեղճուկը: Թող միքիշ,—աւելացրեց նա և, մօտենալով սահնակին, Վասիլիյ Անդրէիչի տակից դուրս քաշեց կտաւը: Յետոյ, երկու տակ ծալելով նրան ու նախ մի կողմ գցելով միջափողը և վերցնելով կեխը, նա ծածկեց նրանով Բաշօյին:

—Այսպէս աւելի տաք կը լինես, յիմար,  
—ասում էր նա, նորից ձիու մէջքին դնելով  
կտաւել վրայից կեխն ու կապելով մի-  
ջափոկը:

—Իսկ ձեզ ձիւուպը հարկաւոր չի լինի:  
Միքիչ էլ յարգ տէք ինձ,—ասաց Նիկիտան,  
իր այդ աշխատանքը վերջացնելով ու  
նորից սահնակին մօտենալով:

Եւ, վասիլիւ Անդրէիչի տակից դուրս  
քաշելով թէ մէկը և թէ միւսը, Նիկիտան  
սահնակի յետևի կողմը անցաւ, այնտեղ,  
ձիւնի մէջ, իր համար փոս փորեց, մէջը  
յարգ փռեց և, գլխարկը մինչև ականջները  
քաշելով ու փաթաթելով վերնագգեստի  
մէջ և վրայիցն էլ ձիւուպը ծածկելով, նըս-  
տեց փռած յարդի վրա, մէջքը դէմ տալով  
սահնակի յետևին, որ նրան պաշտպանում  
էր թէ քամուց և թէ ձիւնից:

Վասիլիւ Անդրէիչը չը հաւան կերպով  
զլուխը շարժեց Նիկիտայի արածի վրա,  
ինչպէս որ նա առճասարակ չէր հաւանում  
գիւղացիական անկրթութիւնն ու յիմարու-  
թիւնը, և ինքն էլ իր համար գիշերուայ  
տեղ պատրաստեց:

Նա սահնակի մէջ մնացած յարդը փռեց  
յատակին, կողքերի տակը աւելի թանձր

անելով և, ձեռքերը թևերի մէջ կոխելով,  
զլուխը դէմ տուց սահնակի առաջի կողմի  
անկիւնին, որ նրան պաշտպանում էր քա-  
մուց:

Նրա քունը չէր տանում: Նա պարկել ու  
մտածում էր. մտածում էր միշտ միևնոյն  
բանի մասին, որը նրա կեանքի միակնպա-  
տակը, էութիւնը, ուրախութիւնն ու հպար-  
տութիւնն էր կազմում. նա մտածում էր այն  
մասին, թէ ինչքան ինքը փող է վաստակել  
և գնու էլի որչափ կարող է վաստակել. թէ  
ինչպէս են ուրիշները, որոնց ինչը ճանա-  
չում է, փող վաստակել ու որչափ փող ու-  
նին, և թէ ինչ եղանակով են այդ ուրիշնե-  
րը փող վաստակել ու վաստակում. ու թէ  
ինչպէս ինքն էլ, այդ ուրիշների հման, կա-  
րող է գնու շատ փող վաստակել: Գօրեհաչկի-  
նօի անտառը ամենը նրա համար շատ մեծ  
կարևոր գործ էր համարում: Նա յոյս ու-  
նէր, որ այդ անտառով կարող է յանկարծ  
հարստանալ, գուցէ տաս հազար ռուբլի ստա-  
նայ: Եւ նա սկսեց իր մտքի մէջ գնահա-  
տութեան դնել աշնանը տեսած անտառը,  
որի մէջ երկու գետեաթինի տարածութեան  
վրա նա համրել էր բոլոր ծառերը:

«Կաղնին սահնակի տակի կողքերի համար

պէտք կը գնայ: Կտրւածքները ինքն ըստ ինքեան: Իսկ վառելիքի մասին մի գեւեակտիրնից 30 սամեն դուրս կը գայ», ասում էր նա ինքն իրան: «Ամեն մի գեւեակտիրնից ամենաքիչը 225 բուրլի կը մնայ: 56 դիսեակտիրնից կը ստանամ 56 հարիւր, դարձեալ 56 հարիւր, 56 տաս, էլի 56 տաս և 56 հինգ բուրլի»: Նա տեսնում էր, որ 12 հազարիցն էլ անցնում է, բայց առանց չտակի նա չէր կարողանում հասկանալ, թէ ճիշտ որչափ է անում: «Տասը հազար այնուամենայնիւ չեմ տայ, այլ ութ հազար կը տամ և պայմանով, որ բաց գետինները հաշի չառնեն: Երկրաչափի բերանը կը շաղցրացնեմ մի հարիւր, թէկուզ 150 բուրլիով. սա մի հինգ գեւեակտիրն բաց գետին կը շափի ինձ համար: Ութ հազարով էլ կը տայ: Երեք հազարը չէնց հիմա ստամենրի տակը կը գնեմ: Ի հարկէ, կը հալի», մտածում էր նա, թևովը գրպանի թղթակալը շոշափելով, «Եւ ինչպէս խոտորեցինք դառնալու տեղումը, այդ միայն Աստուած գիտէ: Այստեղ պէտք է անտառ ու պահակնոց լինեն: Պէտք է շների ձայն լսէր: Չեն յաջում անիծւածները, երբ հարկաւոր է»: Նա մուշտակի վիզը հեռացրեց ականջից ու սկսեց լսել. լսում էին

միայն դարձեալ նոյն քամու շոյքը, լծափայտի վրա ծածանուող թաշկինակի շրթիկ-շրթիկոցը ու սահնակի կողերին խփող ձիւնի ձայնը: Նա նորից ծածկեց գլուխը: «Եթէ իմանայի, գիշերելու կը մնայի: Բայց, միևնոյն է, վաղն էլ կը հասնենք: Միայն թէ ի դուր օրը կ'օրցրի: Այսպիսի կղանակին նրանք էլ չեն դնայ»: Եւ նա մտաբերեց, որ 9-ին մտադարձից պէտք է փող ստանար: «Ուզում էր ինքը անձամբ գալ. ինձ տանը չի դնի, իսկ կինս էլ չի կարողանայ փողը ստանալ: Չափազանց տնկիրթն է: Մարդկանց հետ վարեելու ձեր չը գիտէ», շարունակում էր նա մտածել, յիշելով, թէ ինչպէս էինքն մեծարել չէր կարողանում ստանճիւղին, որ երեկ տօների առիթով իր մօտ հիւր էր եկել: «Պարզ բան է, որ կէնարմադ է: Ո՞րտեղ և ի՞նչ է տեսել: Մեր ձնոգների կենդանութեան ժամանակ ի՞նչ դրութեան մէջ էր մեր տունը: Հարուստ գիւղացի և ուրիշ ոչինչ. մեր ամբողջ կարողութիւնը մի քամու աղաց էր ու մի խան: Իսկ ես, ի՞նչեր արեցի 15 տարւայ մէջ: Ուսուցի, երկու գինետուն, ջրաղաց, ցորեն մաղելու մեքենայ, կապալով տւած երկու կալւած, երկաթածածկ տուն իր

ամբարովը», մտարերեց նա հպարտութեամբ: «Բոլորովին այն չէ հիմա, ինչ որ ծնողներին օրովն էր. հիմա ո՞վ է ամբողջ դաւաճը զգրդացնողը: Բրեխոճնովը»:

«Բայց ի՞նչու այդպէս է: Որովհետեւ արթուն եմ, աշխատում եմ; այլ ոչ թէ, ուրիշների նման, պարկում կողքին վրա կամ թէ յիմարութիւններով զբաղուած: Ես գիշերներ եմ անքուն անցկացնում: Փոթորիկ կայ թէ չը կայ, գործի յետեւից եմ գնում: Հէնց այդպիսով էլ գործ է կատարում: Ուրիշները կարծում են, թէ փողը հէնց էնպէս ինքն իրան է գալի: Ձէ, բարեկամ, աշխատիր ու գլուխդ էլ քարովը տուր: Այ, այսպէս գիշերը դաշտումը անցկացրու ու քունդ էլ կտարիր: Մտածմունքից զլիւս միջինը բարձի նման շուռ ու մառ է գալիս»:

մտածում էր նա հպարտութեամբ: «Կարծում են թէ մարդ դառնալը բազում բան է: Հրէն այ, Միրօնովները հիմա միլիօններ ունեն: Բայց ի՞նչիցն է: Աշխատիր, Աստուծ էլ կը տայ: Մենակ թէ Աստուած մարդուն առողջութիւն տայ»:

Այն միտքը, թէ ինքն էլ կարող է նոյնպիսի միլիօններ դառնալ, ինչպէս Միրօնովը, որը ոչնչութիւնից էր քարձրացել, այն

աստիճան վրդովեց Վասիլիյ Անդրէիշին, որ նա պահանջ զգաց մի որ և է մարդու հետ խօսելու: Բայց զբոյցաւնկեր չը կար... Եթէ Գօրեաչկին հասած լինէր, այ նա կը խօսէր կալուածատիրոջ հետ, նրա աչքերը չորս բանալ կը տար:

«Տես, ի՞նչպէս է փշում է: Կարող է մեզ այնպէս ծածկել ձիւնով, որ առաւօտն էլ չկնր կարողանայ դուրս գալ», մտածեց նա, ուշադրութիւնը քամու հորձանքների վրա դարձնելով, որ խփում էր սահնակին, ծուռ մըն ու ձիւնով մտրակում ճակատին: Վասիլիյ Անդրէիշը գլուխը բարձրացրեց ու սկսեց նայել, շուրջը աստանուղ սպիտակ մթութեան մէջ երևում էին միայն Բաշօի սևին տաղ գլուխն ու ֆլու-ֆուացող կտուով ծածկած մէջքը և կապ աւած խիտ սոջը: Իսկ չորս կողմը, կէտ անջիւղ և թէ յետեւից, միւնուցն տատանուող սպիտակ խաւարն էր, որ երբեմն կարծես փոքր ինչ նոսրանում էր, երբեմն էլ աւելի խտանում:

«Ի՞ գուր նիկիտային լսեցի», մտածում էր նա: «Հարկաւոր էր ճանապարհը շարունակել, անշուշտ մի տեղ դուրս կը գայինք: Գոնէ յետ դառնայինք Գրիշկինս, Տարասի

մօտ կը մնայինք գիշերը: Թէ չէ՛ նստիր  
 ա՛նա ամբողջ գիշերը: Այ քեզ յիմար զրու-  
 թիւն: Անշուշտ, Աստուած աշխատողին է  
 վարձատրում, և ոչ թէ ծոյլերին, կողքի  
 վրա պարկոզներին ու յիմարներին է տա-  
 լիս: Հարկաւոր է ծխել: Նա նստեց, մի  
 պապիրոս հանեց, պարկեց փորի վրա: փե-  
 շովը պաշտպանելով կրակը քամուց, բայց  
 քամին դարձեալ ճանապարհ էր գտնում ու  
 հանգչնում լուծկիները միմեանց յետե-  
 ւից: Վերջապէս նա հնար գտաւ մի լուծ-  
 կին վառել, ու պապիրոսը կպցրեց: Նրան  
 շատ ուրախացրեց այն հանգամանքը, որ  
 յաջողեց իր ուղածը անել: Թէև պապիրոսը  
 շատ աւելի քամին ծխեց, քան ինքը, բայց  
 և այնպէս նա կարողացաւ էլի մի երկու ե-  
 րեք անգամ ծուխը ներս քաշել: և նրա  
 տրամադրութիւնը նորից լաւացաւ: Նա  
 նորից թէք ընկաւ, փաթաթեց ու նորից  
 սկսեց մտաբերել, երագել և, բոլորովին  
 անսպասելի կերպով, յանկարծ գիտակցու-  
 թիւնը կորցրեց ու քունը տարաւ:

Բայց յանկարծ կարծես թէ մի բան բո-  
 թեց և զարթեցրեց նրան: Արդեօք ձին նրա  
 տակից դարման դուրս քաշեց, թէ՛ նրաներ-  
 սիցը մի ինչ որ բան շարժեց նրան, յայտ-

նի չէ. միայն թէ նա զարթնեց, և նրա սիր-  
 տը այնպիսի արագութեամբ ու ուժգնու-  
 թեամբ սկսեց բարախել, որ նրան թւում  
 էր, թէ սահնակը տակին ժրջվելում է: Նա  
 բացեց աչքերը: Նրա շուրջը միևնոյն բանն  
 էր, միայն թէ կարծես աւելի լոյս էր: «Լոյսը  
 բացում է», մտացեց նա, «եւրեի շատ չէ  
 մնացել առաւօտին»: Բայց իսկոյնեւա նա  
 յիշեց, որ այժմ աւելի լոյս է նրա համար  
 միայն, որ լուսնեակը դուրս էր եկել: Նա  
 գլուխը բարձրացրեց և նախ ձիուն նայեց:  
 Բաշօն յետևով դէպի քամին կանգնած  
 ամբողջ մարմնով գողում էր: Չիւնով ծած-  
 կած ջուրը մի կողմով վրան էր ձալել,  
 միջափողը կողքի վրա էր ծուխել, իսկ ձիւ-  
 նով ծածկած գլուխը իր ծածանւող փուն-  
 ջով ու բաշով այժմ աւելի: Կարող էր երևում:  
 Վրսիլի Անդրէիչը դէպի սահնակի յետևի  
 կողմը շուռ եկաւ ու նայեց ցած: Նիկոնան  
 նստած էր նոյն դրութեան մէջ, ինչպէս որ  
 նստել էր: Նրա վրայի ձիւլոյն ու սաները  
 ծածկէլ էին ձիւնի հաստ շերտով: «Չը սառ-  
 չի՛ իսկզ՞ գիւղացին, վրայի հագուստը շաա  
 վատն է: Կարող եմ պատասխանատուութեան  
 տակ էլ ընկնել: Այ թէ որն է անհասկացող  
 ժողովուրդը: Կատարեալ անկրթութիւն»,

մտածեց Վասիլիյ Անդրէիչը և ուղեց ձիու վրայից կտաւը հանել ու նիկիտայի վրա ծածկել, բայց մրտում էր տեղից վեր կենալ ու շարժւել, վախկնտում էր, որ ձին էլ կարող է սառչել: «Ախր ես ինչո՞ւ նրան հետս վերցրի: Գարձեալ կնոջս յիմարութեան շընորհով»: մտածեց Վասիլիյ Անդրէիչը, դարձեալ իր չը սիրած կնոջը մտարերելով, ու նորից իր նախկին տեղը թէք ընկաւ: «Մէկ անգամ այսպէս հօրեղբայրս ամբողջ գիշերը մնացել էր ձիւնի մէջ նստած», մտարերեց նա, «և ոչինչ: Բայց Աեւաստեանին ձիւնի միջից սառած հանեցին», իսկոյնսետ մի ուրիշ պէպքի գիշեց նա. «նա արդէն մեռել էր, ամբողջապէս՝ փետացնել էր, ինչպէս սառեցրած դովուբմա»:

«Եթէ Գրիշկինոյում մնայի գիշերը, ոչինչ էլ չէր պատահի»: Եւ նա, ինսամբով մի լաւ փաթաթեցելով իր մուշտախննրի մէջ, որպէսզի նրանց տաքութիւնը ոչ մի կերպ իզուր տեղը չը կորչի, այլ որ տաք մնան թէ վիզը, թէ ձեւները և թէ ոտները, փակեց աչքերը և աշխատեց նորից քնել: Բայց որչափ էլ չէր աշխատում հիմա, նա այլևս չէր կարողանում մոռացութեան մէջ ընկնել, ընդհակառակը՝ իրան բոլորովին առոյգ ու կայ-

տառ էր զգում: Նա սկսեց դարձեալ հաշուել իր վաստակածները, մարդկանց վրա մնացած ապառիկները, նորից սկսեց ինքը իրան պարծենալ և ուրախանալ իր ու իր դիրքի վրա, բայց և հիմա այդ բոլորը շարունակ ընդհատում էին նրա մէջ մտած վախով ու այն տանջող մտքով, թէ ինչո՞ւ ինքը չը մնաց Գրիշկինոյում գիշերելու: «Լաւ սիրուն կը պարկէի լայն նստարանի վրա ու չէի մրսի»: Մի քանի անգամ նա այս ու այն կողմ շուտ եկաւ, տեղաւորում էր, աշխատելով աւելի յարմար ու քամուց պաշտպանւած դիրք ընդունել, բայց միշտ էլ նրան թւում էր, որ անյարմար է: Նա դարձեալ վեր էր կենում, փոխում էր գիրքը, փաթաթում էր ոտները, փակում էր աչքերը ու սուտ էր կենում: Սակայն կամ թաղիքէ ամուր կօշիկների մէջ փաթաթւած ոտներն էին սկսում մըզմզալ, կամ մի որնէ տեղից փչում էր, և նա շատ շուտով նորից գծգոհութեամբ յիշում էր, թէ ինչպէս ինքը հիմա Գրիշկինոյում տաք խըրճիթի մէջ հանգիստ պարկած կարող էր լինել, ու դարձեալ պարկած տեղից վեր էր կենում, շուտ էր գալիս, փաթաթւում ու նորից տեղաւորում:

Մէկ անգամ Վասիլիյ Անդրէիչին այնպէս

թւաց. թէ հեռւից աքաղաղների կանչ է լըսում ինքը: Ուրախացաւ, մուշտակի վիզը մի կողմ տարաւ ու սկսեց լարւած լսել, բայց որչափ էլ նա լարում էր լսողութիւնը, ոչինչ չէր լսւում, բացի քամու ձայնից. որ լծափայտերի միջով շքշքւացնում ու թաշկինակն էր թափահարում, և սահնակի կողքին մտրակող ձիւնի ձայնից:

Նիկիտան ինչպէս որ երեկոյից նստել էր, այնպէս էլ ամբողջ ժամանակ մնացել էր նստած, բոլորովին տեղից չը շարժւելով ու մինչև իսկ չը պատասխանելով Վասիլիյ Անդրէիչին, որը նրան մի երկու անգամ կանչել էր: «Իարդ չունի ու քնել է երևի», նախանձով մտածում էր Վասիլիյ Անդրէիչը. սահնակի յետևում նստած ու ձիւնի հասաշերտով ծածկւած Նիկիտային նայելով:

Վասիլիյ Անդրէիչը մի քսան անգամ վեր կացաւ անդից ու նորից պարկեց: Նրան թւում էր. որ այդ գիշերը վերջ չունի: «Հիմա արդէն, երևի, լոյսը բացւելուն մօտ է», մըտածեց նա մի անգամ, տեղից վեր կենալով ու շուրջը դիտելով: «Թող մի ժամացոյցիս նայեմ: Բայց չը ստոչեմ, մինչև ժամացոյցս հանեմ: Սակայն, եթէ իմանամ, որ լուսաբացին մօտ է, տրամադրութիւնս կը լաւս

նայ. կը սկսենք լծել»: Վասիլիյ Անդրէիչը սրտի խորքում շատ լաւ էր հասկանում, որ դեռ լուսաբացը չէ կարող մօտ լինել, բայց նա դնալով աւելի ու աւելի էր սկսում վախ գգալ և միենեղն ժամանակ կամենում էր թէ ճշտել և թէ խարել իրան: Նա զգուշութեամբ դուրս գցեց կիսամուշտակի շափրաստները, ձեռքը ծոցը տարաւ, երկար քրքրեց մինչև որ ժիլետին հասաւ: Հագիւնալ նա դուրս բաշեց իր էմալէ ծաղիկներով դարդարւած արծաթեայ ժամացոյցը և սկսեց նայել: Առանց ճրագի ոչինչ չէր երևում: Նա նորից քիթ ու բերնի վրա պարկեց, յենւելով արմունկների ու ծնկների վրա, և, ինչպէս ծխախոտը վառելու ժամանակ, հանեց լուծկիներն ու սկսեց վառել: Սյս անգամ նա աւելի զգուշութեամբ վարեց. նախ մտաներով շոշափեց, թէ ո՞ր լուծկիի զլիւին աւելի շատ ֆոսֆոր կայ, և ապա վառեց, ու հէնց առաջին անգամից էլ լուծկին կպաւ: Ժամացոյցը բոլորովին լոյսին մօտեցնելով, նա նայեց ու զարմացաւ. նա իր աչքերին չէր հաւատում... Ընդամենը տասներկուայ անց էր տաս րոպէ: Դեռ ևս գիշերը ամբողջովին մնում էր:

«Օխ, երկար է գիշերը», մտածեց Վասի-

լիջ Անդրէիչը, զգալով, թէ ինչպէս մի սարսուռ անցաւ իր մարմնով, և, նորից կոճկելով ու փաթաթելով, նա կուճ կկաւ ու կպաւ սահնակի անկիւնին, որոշելով համբերութեամբ սպասել: Յանկարծ քամու միատեսակ ազմուկի միջից նա պարզ կերպով լսեց մի ինչոր նոր, կենդանի ձայն: Չայնք միապարզադ ուժեղանում էր և, միանգամայն պարզ ու որոշ դաճնալուց յետոյ, նորից սկսեց միապարզադ կերպով նւագել: Ոչ մի կասկած չը կար, որ դա դայլ էր: Եւ այդ դայլը աշնչափ մօտիկ էր ոտնում, որ քամու շնորհիվ շատ պարզ լուում էր, թէ ինչպէս էր նա, ծնտաները այս ու այն կողմ ծոմոնելով, փոփոխում իր ձայնի ելևեջները: Վասիլիչ Անդրէիչը յետ ատրաւ մուշտակի վիզը և ուշադրութեամբ լսում էր: Բաշան էլ լարած լսում էր, ականջները իրլշտացնելով, և, երբ գայլը դադար ստաւ, նա մի ոտից միւսի վրա փոխեց ու նախադգուշողարար փուշտաց: Դրանից յետոյ Վասիլիչ Անդրէիչը ոչ միայն այլևս չէր կարողանում քնել, այլ և չափազանց անհանդիստ էր: Որչափ նա աշխատում էր իր հաշիւների, գործերի մասին մտածել, իր փառքի, արժանապատուութեան ու հարստութեան

մասին երագել, այնքան աւելի ու աւելի էր վախը նրան տիրում. և նրա բոլոր մտածումներին գերիշխում, բոլոր խոհերին շարունակ միախառնում էր այն միտքը, թէ ինչու ինքը չը մնաց Գրիշկինսոյում գիշերելու:

«Ջըհանգամը լինի անտառը, ատանց անտառի էլ, փառք Ասածոյ, շատ գործեր կան: Ահ, գոնէ քունս տանէր», ասում էր նա ինքն իրան: «Ասում են, որ հարբածները սառչում են», մտածեց նա: «Իսկ ևս բաւական խմեցի: Ուշադրութեամբ քննելով, թէ ինչէ կառարում իր հետ, նա ըզգաց, որ սկսում է գողալ, ատանց հասկանալու, թէ ինչից է դոշում՝ ցրտից թէ վախից: Նա փորձում էր փաթաթել ու պարկել ատաջան պէս, բայց այլևս աչգ էլ չէր կարողանում: Նա չէր կարողանում միենոյն տեղում մնալ, ուզում էր վերկենալ, մի բան անել, որպէսզի խլացնի իր մէջ բարձրացող վախը, որի գէմ նա իրան անդօր էր զգում: Նա նորից հանեց պապիրոսներն ու լուծկիները, բայց արդէն երեք լուծկի էր միայն մնացել և այն էլ ամենավատերն էին: Բոլոր երեքն էլ ֆըտացին, ատանց վառւելու:

«Այ, գրողը տանի քեզ, անիծւած, կորիք»:



հայհոյեց նա, ինքն էլ չիմանալով թէ ում, և մի կողմ շարտեց ճիւղաւած պապիրոսը: Ուզում էր լուծկու ամանն էլ շարտել, բայց կանգնեցրեց ձեռքի շարժումը և զըրպանը կոխեց: Նա այնպիսի անհանգիստ դրութեան մէջ էր ընկել, որ այլևս չէր կարողանում իր տեղում մնալ: Յաճ իջաւ սահնակից և, յետևով դէպի քամին կանգնելով, արձակեց գոտին ու նորից կապեց աւելի ցած և շատ ամուր:

«Ինչ՞ու պարկեմ, մահին սպասեմ, ի՞նչ է: Աւելի լաւ է նստեմ ձիու վրա և հայգա», յանկարծ ծագեց նրա գլխումը: «Վրան նրատեչով ձին չի հոգնի: Իսկ նրա համար, — մտածեց նա Նիկիտայի մասին, — միեւնոյն է պիտի մեռնի: Եւ ի՞նչ է նրա կեանքը: Նա իսկի չի էլ ափսոսայ այդ կեանքը, իսկ ես, փառք Աստուծոյ, ապրելու լաւ միջոցներ ունեմ»...

Եւ նա, արձակելով ձին, սանձը վզովը գցեց և ուզեց ցատկել, վրան նստել: Բայց մուշտակներն ու կոշիկները այնքան ծանր էին, որ չը յաջողեց: Այդ ժամանակ նա կանգնեց սահնակի վրա ու կամեցաւ սահնակի վրայից նստել: Սակայն սահնակը օրօրեւց նրա ծանրութեան տակ, և դարձեալ

չը յաջողեց: Վերջապէս երրորդ անգամը նա ձին սահնակին մօտեցրեց և, զգուշութեամբ սահնակի եզրին կանգնելով, այնուամենայնիւ յաջողեց գոնէ այն անել, որ փորով խաչաձև ձիու մէջքին պարկեց: Փորքինչ այդ գրութեան մէջ մնալուց յետոյ, նա մի երկու անգամ փորի վրա դէպի սուսջ սողաց ու վերջապէս մի ոտը ձիու մէջքովը գցեց ու նստեց, ոտները միջափոկից դէպի ձիու կուրծքը գնացող կաշիների վրա յենելով: Սահնակի յանկարծակի շարժելը — զարթեցրեց Նիկիտին, և նա ուղղեց, և Վաւիլիյ Անդրէիչին թւաց, թէ նա մի ինչոր բան է ասում:

— Ձեզ պէս յիմարներին լսողը, պէտք է բոյորովին և ի զուր տեղը կորչի, — բղաւեց Վաւիլիյ Անդրէիչը և, ծնկները ծածկելով մուշտակի ծածանաւոյ փեշերով, շուտ աւելի ձին ու բշեց նրան. սահնակից հեռու դէպի այն կողմը, ուր նա ենթադրում էր, թէ պէտք է անտառն ու պահանջոցը լինեն:

Նիկիտան այն ժամանակեանից, ինչ նըստել էր սահնակի յետևում ճիւղսլով ծածկւած, հէնց այնպէս էլ մնացել էր անշարժ: Նա համբերատար էր, ինչպէս այն բոլոր մարդիկ, որոնք ապրում են բնութեան ծոցում և սովոր են խեղճութեան: Նա կարող էր համբերութեամբ սպասել ամբողջ ժամեր, մինչև իսկ օրեր, առանց անհանգըստութիւն զգալու և ոչ էլ զբոկելու: Նա լսել էր, թէ ինչպէս տէրը կանչել էր իրան, բայց չէր պատասխանել, որովհետև չէր ուզեցել տեղից շարժուիլ ու պատասխանել: Թէև նա գետ իրան տաք էր զգում իմած թէյի ու ձիւնահալի մէջ երկար այս ու այն կողմ գնալու շնորհով, բայց նա լատ գիտէր, որ այդ տաքութիւնը նրա մէջ կրկար չի տեսլու, և որ ինքը նորից շարժումներ անելով չը պիտի կարողանայ տա-

բանալ, որովհետև այն աստիճան իրան հոգնած էր զգում, ինչպէս որ զգում է ձին, երբ ճանապարհին կանգ է առնում ու, չը նայելով մտրակի ամենախիստ հարւածներին, անկարող է այլևս ճանապարհը շարունակել, և տէրը համոզում է, որ անհրաժեշտ է կերակրել, որպէսզի ձին նորից կարողանայ աշխատել: Նրա մէկ սուր պատուած կօշիկի մէջ արդէն ստուել էր, և նա այլևս չէր զգում բթամատը: Բացի դրանից՝ նրա ամբողջ մարմինն էլ գնալով աւելի ու աւելի պաղում էր: Այն մի:տքը, թէ ինքը կարող է և, մինչև իսկ ամենայն հաւանականութեամբ, պիտի այս գիշեր մեռնի, նրա գլխումն էլ ծագեց. սակայն այդ մի:տքը նրան ոչ մի առանձին դժգոհութիւն և ոչ էլ մանաւանդ սարսափ պատճառեց: Նրան մի առանձին դժգոհութիւն չը պատճառեց այդ մի:տքը այն պատճառով, որ նրա ամբողջ կեանքը շարունակական խրախճանք չէր եղել, այլ, ընդհակառակը՝ նրա կեանքը եղել էր անվերջ ծառայութիւն, որից նա արդէն սկսել էր հոգնել: Իսկ մի առանձին սարսափ չէր պատճառում նրան այդ մի:տքը նրա համար, որ նա զգում էր, թէ բացի այն տէրերից,

ինչպէս օրինակ՝ Վասիլիյ Անդրէիչը, որոնց նա ծառայում ու որոնցից կախումն ունէր այստեղ ինքը այս կեանքում շատ աւելի կախումն ունի այն գլխաւոր Տիրոջից՝ Նրանից, որն իրան այս աշխարհն է ուղարկել: Եւ նա գիտէր, որ մեռնելուց յետոյ էլ այդ նոյն Տիրոջ իշխանութեան տակ պիտի մնայ, և որ այդ Տէրը նրան չի գրկի: «Ափսոս է սովորած, ընտելացած կեանքը թողնել: Ինչ, ինչ արած, նորին էլ պէտք է վարժուել»:

«Մեղքե՛րս», մտածեց նա և յիշեց իր յարեցողութիւնը, օգու տւած փողերը, կնոջը հասցրած վիրաւորանքները, հայհոյանքները, եկնդեցի չը յաճախելը, պատ չը պահելը և այն բոլորը, որոնց համար քահանան նրան նկատողութիւններ էր անում խօստովանութեան ժամանակ: «Ի հարկէ, մեղք շատ եմ գործել: Բայց քնչ, մթթէ ևս գիտութեամբ եմ այդ մեղքերը գլխիս հաւարել: Երևի ինձ Աստուած այդպէս է ստեղծել: Ի՛նչ լսւ, մեղքեր ունեմ. ապա ռէր գնամ»:

Այդպէս նա մտածեց սկզբում այն մասին, թէ ինչ կարող է պատահել իր հետ այս գիշեր, իսկ յետոյ արդէն նա այլևս այդ խոհերին չը վերադարձաւ և ամբողջապէս տըրուեց այն յիշողութիւններին, որոնք ինքնա-

րերարար անցնում էին նրա գլխովը: Մէկ նա յիշում էր Մարթայի զալուստը, բանւորների յարեցողութիւնն ու իր՝ օգուց հրածարելու դէպքերը, մէկ էլ յիշում էր այսօրւան ճանապարհորդութիւնը, Տարասնեց խրճիթը. բաժանումի մասին եղած խօսակցութիւնները, յիշում էր իր աղիկի մասին, Բաշօի մասին, որը կը տաքանար հիմա ջուրի տակ. յիշում էր տիրոջը, որը այժմ, թաւալելով սահնակի մէջ, ճոճուցնում էր նրան: «Նա, խեղճն էլ ուրախ չէ, որ ճանապարհ գուրս եկաւ,—մտածում էր նա:—Նրա նման կեանք վայելողը չի ցանկանայ մեռնել: Մնր բանը բոլորովին ուրիշ է»: Եւ այս բոլոր յիշողութիւնները սկսեցին միմեանց հետ խճճուել, միմեանց խառնուել նրա գլխում, և նրա քունը տարաւ:

Իսկ երբ Վասիլիյ Անդրէիչը, ձի նստելու ժամանակ, սաստիկ շարժեց սահնակը, ու սրա յետևի մասը, որին յենել էր Նիկիտան մէջքովը, բոլորովին յետ մղեց, ու տակի ձողը խփեց նրա մէջքին: Նիկիտան զարթեց և կամայ-ակամայ ստիպւած էր իր զիբը փոխել: Դժուարութեամբ ոտները ուղղելով ու նրանց վրայից ձիւնը թափելով, նա վեր կացաւ տեղից, և խկոյնեւտ սոս-

կալի ցուրտը մտաւ նրա ամբողջ մարմնի մէջ: Հասկանալով, թէ բանն ինչու՞ն է, նա ուզեց, որ Վասիլիյ Անդրէիչը իրան թողնի ձիու համար այլևս պէտք չեղող կտաւը, որ պէսզի հիմա էլ ինքը ծածկէր նրանով: Այդ էր նա ասել Վասիլիյ Անդրէիչին:

Բայց Վասիլիյ Անդրէիչը չուզեց կանոգ առնել և անհետացաւ ձիւնի փոշու մէջ:

Մնալով միայնակ, Նիկիտան մի րոպէ մտածեց, թէ ինչ անելու է: Գնալ բնակչութիւն փնտռելու՝ նա իր մէջ ոյժ չէր զգում: Նոյն, հին տեղումը նստելը այլևս անհնարին էր. այդ տեղը ամբողջապէս լցւել էր ձիւնով: Սահնակի մէջ էլ, նա զգում էր, որ չի կարողանայ տարանալ, որովհետեւ: Նրա «Կաֆուսն» ու մուշտակը հիմա այլևս չէին տարացնում նրան: Նա այնպէս էր մըսում, որ կարծես թէ մէկ շապկով լինէր: Նա սարսուռ զգաց: «Տէր, Երկնային Աստած», արտասանեց նա, և այն զգացմունքը, թէ ինքը միայնակ չէ, այլ կայ մէկը, որ իրան լսում է ու պահապան է, հանդստացրեց նրան: Նա խորը ախ քաշեց և, առանց ձիւլովը զլխից վերցնելու, բարձրացաւ սահնակի վրա ու պարկեց տիրոջ տեղումը:

Բայց սահնակի մէջ էլ նա չէր կարողու-

նում ոչ մի կերպ տաքանալ: Սկզբում նա զողում էր ամբողջ մարմնով, իսկ յետոյ զողը անցաւ, և նա կամաց-կամաց սկսեց գիտակցութիւնը կորցնել: Մեռնում էր արդեօք, թէ քունն էր տանում, նա չը գիտէր, բայց նա միատեսակ պատրաստ էր զգում իրան թէ մէկի և թէ միւսի համար:

## VIII

Այդ միջոցին Վասիլիյ Անդրէիչը թէ ոտներով և թէ սանձի ծայրերով քշում էր ձին գէպի աջն կողմը, ուր որ, յայտնի չէ թէ ինչու, նա ենթադրում էր, անտառ ու պահակնոց պիտի լինեն: Ձիւնը փակում էր նրա աչքերը, իսկ քամին էլ կարծես թէ ուզում էր կանգնեցնել նրան. բայց նա կռացած գէպի առաջ և շարունակ մուշտակը քաշելով ու իր տակը հրելով, որպէսզի հնարաւոր դառնայ սառը կեխի վրա նստելը, անդադար քշում էր ձին: Ձին, թէև Կժաբուժեամբ, բայց հնազանդութեամբ գնում էր եորդայ քայլերով գէպի աջն կողմը, ուր որ Վասիլիյ Անդրէիչն էր նրան ուղարկում:

Մօտ հինգ րոպէ նա գնաց, ինչպէս իրան էր թւում, միշտ միեւնոյն ողողութեամբ: Նա ոչինչ չէր տեսնում, բացի ձիու գլխից ու սպիտակ անասլասից և ոչինչ չէր լսում

բացի իր ու ձիու ականջների տակ սոււող քամուց:

Յանկարծ նրա առջևում մի ինչոր սև բան երևաց: Ուրախութիւնից նրա սիրտը սկսեց թոթալ, և նա ձին քշեց ուղղակի գէպի աջը սև բանը, ուր նրա աչքերին արդէն գիւղական տների պատեր էին երևում: Բայց այդ սև բանը անշարժ չէր, այլ շարունակ երբուում էր: Եւ դա գիւղ չէր, այլ արտերի սահմանամիջում բուսած բարձրահասակ զընդածաղիկներ էին, որ դուրս էին ցցել ձիւնի միջից ու յուսահատ երերում էին կատաղի սոււոցներ արձակող քամուց: Յայտնի չէ թէ ինչու, անխիղճ քամուց տանջող այդ զընդածաղիկների տեսքը ստիպեց Վասիլիյ Անդրէիչին սառսուռ զգալ, և նա աւելի շտապով սկսեց քշել ձին, բոլորովին չը նկատելով, որ: Չնդածաղիկներին համեմուց յետոյ նա բոլորովին փոխել էր իր ճանապարհի նախկին ուղղութիւնը և այժմ արդէն բոլորովին մի այլ կողմ էր քշում ձին, երևակայելով սակայն, թէ ինքը գնում է գէպի աջն կողմը, ուր պէտք է որ պահակնոցը լինի: Բայց ձին շարունակ գէպի աջ էր ծըռւում, այդ պատճառով էլ Վասիլիյ Անդրէիչը բոլոր ժամանակ գէպի ձախ էր դարձնում:

Առջևում նորից սև բան երևաց: Նա ուրախացաւ, հաւատացած լինելով, թէ այս անգամ արդէն, անշուշտ, գիւղ է: Բայց դա դարձեալ արտերի միջասանման էր գնդածաղիկներով ծածկւած: Չորացած խոտի ձողունները դարձեալ յուսահատ կերպով երերում էին չը գիտեմ ինչու, սաստիկ վախ պատճառելով Վասիլի Անդրէիչին: Բաւական չէ, որ դա էլ, նախորդի նման, չորացած խոտեր էին, դրանց մօտովը ձիու ոտների յետքեր էին երևում, ձիւնով ծածկւած: Վասիլի Անդրէիչը կանգ առաւ, կռացաւ ու դիտեց. դա ձիու ոտների յետքեր էին, ձիւնով թեթև ծածկւած, և դրանք կարող էին մրմիւսյն հէնց իր ձիու թողած յետքերը լինել: Պարզ էր, որ նա պտոյտներ էր ածուծ մի փոքրիկ տարածութեան վրա: «Ես կը կորչեմ», մտածեց նա: Եւ, իր միջի վախը խըլացնելու համար, նա սկսեց աւելի արագութեամբ քշել ձիւն, շարունակ աչքերը ձիւնէ սպիտակ մէզին հառած, որի մէջ նրա աչքին կարծես թէ լուսաւոր բծեր էին երևում, որոնք իսկոյնկեստ անհետանում էին, հէնց որ նա դիտում էր նրանց: Մէկ անգամ նրբան թւաց, թէ շան հաջոց, կամ գայլերի ոտնոց է լսում, բայց այդ ձայները այնչափ

թոյլ ու անորոշ էին, որ նա չէր իմանում, թէ արդեօք իրօք լսում է, թէ՞ նրան թւում է միայն: Եւ նա, կանգ առնելով, սկսեց լարւած ուշադրութեամբ լսել:

Յանկարծ մի սոսկալի ու խլացուցիչ ձայն լսեց ձիու ականջների մօտ, և ամեն ինչ զղրդաց ու զողաց Վասիլի Անդրէիչի տակին: Նա վրա ընկաւ ու լոնեց ձիու պարանոցը. բայց ձիու պարանոցն էլ էր սաստիկ զողում, իսկ սոսկալի ձայնը էլ աւելի սոսկալի դարձաւ: Մի քանի վայրկեան Վասիլի Անդրէիչը չէր կարողանում ուշքի գալ ու հասկանալ, թէ ինչ կատարեց: Իսկ կատարեց այն, որ Բաշօն ինքն իրան խրախուսելու համար արդեօք, թէ մի ուրիշին օգնութեան կանչելու նպատակով. իբրինչաց իր սուր ու զողողուն ձայնով: «Թիւ, անիծւես դու, ինչպէս վախեցրեց անպիտանը», ասաց ինքն իրան Վասիլի Անդրէիչը: Բայց վախի իսկական պատճառը իմանալուց յետոյ էլ նա չէր կարողանում իրանից վանել այդ վախը:

«Հարկաւոր է ուշքի գալ, զգաստանալ», ասում էր նա ինքն իրան, բայց և միևնոյն մտամեակ չէր կարողանում իրան զրուպել և շարունակ քշում էր ձիւն, չը

նկատելով բոլորովին; որ այժմ ինքը գնում էր արդէն քամու ուղղութեամբ և ոչ թէ քամու հակառակ: Նրա մարմինը, մանաւանդ ծնկներին վերև, ուր բաց էր և կիսիս էր կաշուամ, սառչում և ցաւում էր. նրա ձեռներն ու ոտները դողում էին, իսկ շնչառութիւնն էլ ծանրացել էր: Նա տեսնում էր, որ ինքը կորչում է այս սոսկալի ձիւնապատ անապատում, և ոչ մի ելք չէ գտնում ազատելու:

Ձին յանկարծ նրա տակին զըրխկաց մի ինչոր տեղ և, խրելով ձիւնահիւսի մէջ, սկսեց երերալ ու մի կողքի վրա ընկնել: Վասիրիյ Անդրէիչը ցատկեց ձիու վրայից և ցատկելու միջոցին, մի կողմի վրա ծռեց միջափսկը, որի վրա նրա սոն էր յեմած, ու շուտուեց կիսը, որից նա բռնել էր վայր ջատկելու միջոցին: Հէնց որ Վասիրիյ Անդրէիչը վայր ցատկեց, ձիւ, իսկոյն ուղղեց, գրո՞հ տեց. մի երկու ոստիւն արեց և, նորից խրինջալով ու յետեւից քարշ տալով վրայից կախ ընկած ջուլն ու միջափսկը, անյայտացաւ մթութեան մէջ, թողնելով Վասիրիյ Անդրէիչին ձիւնահիւսի մէջ միայնակ: Վասիրիյ Անդրէիչը ընկաւ ձիու յետից, սակայն ձիւնը այնչափ խորն

էր ու նրա մուշտակները այնպէս ծանր էին, որ նա, մինչև ծնկներին վեր թաղելով ձիւնի մէջ, քսան քայլ դեռ չարած, կանգնեց շնչասպառ: «Անտառս, ջրաղացներս, կապալները, խանութս, գինետներս, երկաթածածկ տունս ու ամբարս, ժառանգս,—մըտածեց նա,—միթէ պիտի անտէր մնան այդ բոլորը: Այս ի՞նչ է ախր կատարում: Անկարելի է», անցաւ նրա գլխովը, եւ յայտնի չէ, թէ ինչու նա յիշեց քամուց երերացող այն գնդածաղիկը, որի մօտով նա երկու անգամ անց էր կացել, և նրան մի այնպիսի սարսափ տիրեց, որ նա ինքն էլ չէր հաւատում այն բոլորին; ինչ որ իր հետ էր կատարում: Դու մտածեց. «Երբայ չէ՞ ալդեօք այս բոլորը», և ուզում էր զարթնել: Սակայն ձիւ զարթնէր. տեսածը յիշաւ՝ որ իսկական ձիւն էր, որ մտրակում էր նրա երեսին ու ծածկում նրան, սառեցնում աջ ձեռքը, որի վրայից ընկել կորել էր ձեռնոցը, և դա յիշաւ որ մի իւրական անապատ էր, ուր ինքը այժմ մնացել էր միայնակ, ինչպէս այն գնդածաղիկը, սպասելով անխուսափելի շուտափոյթ և անմիտ մահւան:

«Այ սուրբ Տիրամայր Աստուածածին և չափաւորութեան վարդապետ, բարեխօս սուրբ

Միկօլայ»՝ մտաբերեց նա երեկւայ պատարագը և սուրբ Նիկօլայի սևադէմ՝ ոսկեղոծ սուրջալի մէջ նկարած՝ պատկերը. մտաբերեց և այն մոմերը, որ ինքը ծախում էր այդ պատկերի առջ վառելու համար և որ իսկոյն յետ էին բերում շատ քիչ վառած, ու ինքը կրկին պահարանի մէջ էր դարսում: Եւ նա սկսեց հէնց այդ հրաշագործ Նիկօլային խնդրել, որ նա փրկի իրան, խոստացաւ նրան պատարագ և մոմեր: Բայց իսկոյնսետ նա շատ պարզ կերպով հասկացաւ, որ սուրբ Նիկօլայի այն դէմքը, սուրջալը, մոմերը, քահանան, պատարագները շատ կարևոր ու հարկաւոր էին այնտեղ, նրանք ոչինչ չէին կարող անել իրան, և որ այդ մոմերի ու պատարագների և իր այժմեան խղճալի դբութեան միջև ոչ մի կապ չը կայ ու չէ էլ կարող լինել: «Պէտք է չը յուսահատուելի, մտածեց նա: «Հարկաւոր է ձիու ստների յետքովը դնալ, քանի որ ձիւնը դեռ չէ ծածկել», ծագեց նրա գլխումը: Շնորհք ինձ դուրս կը հանեն, դուցէ և կը բռնեմ էլ: Միայն թէ չը պէտք է շտապել, թէ չէ կարող եմ հոգնել և աւելի վատ կորչել: Մակայն, հակառակ հանդարտ գնալու իր դիտաւորութեանը, նա յանկարծ սկսեց վա-

զել, շարունակ վայր ըզնելով, վեր կենալով ու նորից վայր ընկնելով: Զի ու ստների յետքը արդէն հազիւ նկատելի էր դառնում այն տեղերում, ուր ձիւնը շատ խոր չէր: «Կորայ ևս», մտածեց Վասիլիյ Անդրէիչը, «յետքն էլ կը կորցնեմ, ձիուն էլ չեմ հասնի»: Բայց հէնց այդ բոպէին նա նայեց գիմացը և մի սև բան նկատեց: Դա Բաշօն էր, և ոչ թէ միայն Բաշօն, այլև սահնակը, լծափայտերը, իրանց ծայրին կապած թաշկինակով: Բաշօն, կողքից կախ ընկած ջուլովն ու միջափոկով այժմ իր նախկին տեղումը չէր կանգնած, այլ աւելի լծափայտերին մօտիկ, ու շարժում էր գլուխը, շարունակ զէպի ցած կոացնելով նրան, որովհետև սանձի ծայրը ընկել էր ստների տակը: Բանից երևաց, որ Վասիլիյ Անդրէիչը խրել էր հէնց այն ձորի մէջ, ուր նրանք խրել էին սուրբ Նիկիւայի հետ: որ ձին տանում էր նրան յետ՝ զէպի սահնակը և որ նա ձիուց ցատկել էր ոչ աւել քան 50 քայլ հերաւորութեան վրա այն տեղից, ուր սահնակն էր գտնուում:



## IX

Հեվհեվալով իրան մինչև սահնակը պցելով, Վասիլիյ Անդրէիչը բռնեց նրա կողքից ու երկար ժամանակ մնաց անշարժ կանգնած, աշխատելով հանգստանալ ու շունչ առնել: Նիկիտայի առաջւայ տեղում մարդ չը կար, բայց սահնակի մէջ մի ինչ որ բան էր պարկած, որ արդէն ծածկւել էր ձիւնով: Վասիլիյ Անդրէիչը գուշակեց, որ դա Նիկիտան էր: Վասիլիյ Անդրէիչը վախը այժմ բոլորովին անցել էր, և եթէ նա հիմա մի որ և է բանից վախենում էր, այդ միմիայն սարսափի այն սոսկալի դրուժիւնն էր, որ նա կրեց ձիու վրա եղած ժամանակ և մանաւանդ, երբ նա միայնակ մնացել էր ձիւնահիւսի մէջ: Ինչ էլ լինի, հարկաւոր էր թոյլ չը տալ, որ այդ վախը նորից վերադառնայ, իսկ այդ չը թոյլ տալու համար, հարկաւոր էր մի որևէ բան անել, մի գործով զբաղել: Հէնց դրա հա-

մար էլ, առաջին գործը որ նա արեց, այդ այն էր, որ նա յետևը շուռ տալով դէպի քամին, բաց թողեց իր մուշտակը: Յետոյ, հէնց որ փոքր ինչ շունչ քաշեց, նա թափ տւեց իր կօշիկների միջի ձիւնը, թափ տւեց և ձախ ձեռնոցի ձիւնը, իսկ աջ ձեռնոցը անդարձ կերպով կորել էր և, երևի, արդէն մի քառորդ արշին ձիւնի տակն էր մնացել այժմ: Յետոյ նա նորից՝ աւելիցած ու պինդ փաթաթեց իր երկար գոտին ու կապեց, ճիշտ այնպէս, ինչպէս որ նա սովորաբար կապում էր, երբ խանութից դուրս էր գալիս գիւղացիներից սայլերով բերւած յորենն աննելու. և պատրաստեց աշխատելու: Առաջին կատարելիք գործը նրա համար այն թւաց, թէ պէտք է ձիու ոտը աղատել սանձից: Վասիլիյ Անդրէիչը հէնց այդ էլ արեց և, սանձը ոտից ազատելով, կապեց ձին իր առաջւայ տեղում ու անցաւ ձիու յետևի կողմը, որպէսզի ուղղի միջափոկը. կեխն ու ջուլը: Բայց այդ միջոցին սահնակի մէջ, ձիւնի տակից մի ինչ սր բան շարժեց և Նիկիտայի գլուխը դուրս եկաւ: Մեծ դժուրութեամբ, երևի արդէն սառած, Նիկիտան կարողացաւ տեղից շարժւել ու նստել, ձեռները տարօրինակ կերպով քթի տակ այն-

պէս շարժելով որ կարծես թէ ճանճ էր քը-  
շում: Նա ձեռները շարժում ու մի ինչ որ  
բան էր ասում, որ Վասիլիյ Անդրէիչին  
թւաց, թէ իրան է կանչում: Վասիլիյ Ան-  
դրէիչը թողեց ջուլը առանց ուղղելու և մօ-  
տեցաւ սահնակին:

— Ի՞նչ է, — հարցրեց նա, — ի՞նչ ես ասում:

— Մե-ն-եռնում եմ, այ թէ ինչ — դողդո-  
ջիւն ձայնով դժւարութեամբ արտասանեց  
Նիկիտան: — Վաստակածս տղիս կը տաս կամ  
կնկանս, միկնոյն է:

— Ի՞նչ է, սառչում ես, — հարցրեց Վասի-  
լի Անդրէիչը:

— Չգում եմ, մահս մօտ է... ներքի, ի  
սէր Քրիստոսի... — առաց Նիկիտան լացի  
ձայնով, շարունակելով բոլոր ժամանակ  
ձեռները, ճանճեր քշելու ձևով, երեսի մօտ  
շարժել:

Վասիլիյ Անդրէիչը մի կէս ըսպէ կանգ-  
նեց լուռ ու անշարժ, իսկ յետոյ յե՛նկարծ  
նոյն վճռողականութեամբ, ինչպէս որ նա  
ձեռք ձեռքի էր խփում մի որևէ շահաւետ  
առևտուր անելու ժամանակ, նա մի քայլ  
յետ գնաց, մուշտակի թևերը վեր քաշեց ու  
սկսեց երկու ձեռքով Նիկիտայի վրայից սահ-  
նակի միջի ձիւնը գուրս թափել: Չիւնը

գուրս թափելուց յետոյ, Վասիլիյ Անդրէիչը  
շտապով արձակեց իր դոտին, բաց թողեց  
մուշտակը և, բոթելով Նիկիտային, պարկեց  
նրա վրա, ծածկելով նրան ոչ միայն իր  
մուշտակով, այլ և իր ամբողջ ջերմութեամբ,  
տաքացած մարմնովը: Չեռքերով մուշտակի  
փեշերը Նիկիտայի ու սահնակի կողերի մէջ-  
տեղը խրելուց և ծնկներովն էլ այդ փեշերը  
պինդ բռնելուց յետոյ, Վասիլիյ Անդրէիչը  
պարկած մնաց այդպէս երեսի վրա, գը-  
լուխը սահնակի առջևի կողմի կողին դէմ  
ուած: Այժմ նա այլևս չէր լսում ոչ ձիու  
շարժումները, ոչ էլ փոթորկի սուլոցը, այլ  
միմիայն Նիկիտայի շնչառութեանն էր ականջ  
դնում: Նիկիտան երկար ժամանակ պար-  
կած էր անշարժ, յետոյ բարձր շունչ քաշեց  
ու շարժեց:

— Այ, տեսներ, իսկ դու ասում ես, թէ  
ձեռնում ես: Պարզը այդպէս ու տաքացիր,  
այ թէ մենք ինչ... — Հէնց էն է, ուզում էր  
սկսել Վասիլիյ Անդրէիչը:

Բայց, ի մեծ զարմանս իր, նա չը կա-  
րողացաւ խօսքը շարունակել, որովհետև աչ-  
քերը լցեցին արտասուքով, և ցածի ծնոտը  
սկսեց արագութեամբ դողդողալ: Նա դա-  
դարեց խօսելը և միմիայն կուշ էր տալիս

այն, ինչոր կօկորդումն էր հաւաքուում: «Երևում է, որ յուզւած եմ. շատ եմ թուլացել», մտածեց նա իր մասին: Բայց այդ թուլութիւնը ոչ միայն նրան անախորժ չէր, այլ և մի առանձին, դեռ ևս երբէք իր համար չը տեսնւած ուրախութիւն էր պատճառում:

— Այ թէ մենք ինչպէս, — ասում էր նա ինքն իրան, մի ինչ որ առանձին հանդիսաւոր երջանկութիւն զգալով: Բաւական երկար ժամանակ նա այդպէս լուռ պարկած մնաց, աչքերի արտասուէնքը մուշտակի մորթովը սրբելով և ծնկների տակը կոխելով մուշտակի աջ փեշը, որ քամին շարունակ բաց էլ անում:

Բայց նա անյայտ էր ուզում իր զգացած ուրախութեան մասին որևէ մէկին ասել:

— Նիկիտա, — ասաց նա:

— Լաւ է, տաք է, — պատասխան: Լուեց ցածրից:

— Այդպէս, եղբայր, ըստորովին պիտի կորչէի: Դու էլ պիտի սառէիր, ևս էլ...

Բայց այդտեղ նորից նրա ծնոտները դողալ սկսեցին, աչքերն էլ դարձեալ լցեւեցին արտասուքով, և նա չը կարողացաւ խօսքը շարունակել:

— Էհ, ոչինչ, — մտածեց նա: — Ես գիտեմ, թէ ինչ գիտեմ ինքս իմ մասին:

Եւ նա լուեց: Նա այդպէս երկար ժամանակ մնաց պարկած:

Նա իրան շատ տաք էր զգում. ցածրից նրան տաքացնում էր Նիկիտան, իսկ վերևից մուշտակը: Միմիայն ձեռներն ու ոտներն էին սկսել մրսել, որովհետև ձեռներով նա շարունակ մուշտակի փեշերն էր Նիկիտայի կողքերին ամրացնում, իսկ ոտքերի վրայից էլ քամին շարունակ շուռ էր տալիս մուշտակը: Մանաւանդ սառչում էր նրա աջ ձեռքը, որ առանց ձեռնոցի էր մնացել: Բայց նա չէր մտածում ոչ իր ոտների և ոչ էլ ձեռքերի մասին, այլ մտածում էր միմիայն այն մասին, թէ ինչպէս տաքացնի իր տակ պարկած գիւղացուն:

Մի քանի անգամ նա աչք գցեց ձիու կողմը և տեսաւ, որ ձիու մէջքը բաց է՝ շուրն ու միջափոկը ձիւնի վրա են ընկած: Մտածեց թէ հարկաւոր է վեր կենալ ու ծածկել ձին, բայց չէր կարողանում վճռել գէթ մի բոպէ անգամ Նիկիտին թողնել ու խանդարել իր այն երջանիկ դրութիւնը, որի մէջ այժմ նա զգում էր իրան: Այժմ նա այլևս ոչ մի վախ չէր զգում:

«Մի վախենա, չի բացւի», ասում էր նա ինքն իրան նոյն պարծենկոտութեամբ այն մասին, որ ինքը պիտի տաքացնի գիւղացուն, ինչպէս որ սովորաբար նա պարծենում էր իր կատարած առևտուրի մասին:

Այդպէս պարկեց Վասիլիյ Անդրէիչը մէկ, երկու, երեք ժամ, բայց բոլորովին չէր նկատում, թէ ինչպէս է ժամանակը անցնում: Սկզբում նրա երևակայութեան մէջ անցնում էին մրրկի, լծափայտերի ու լըծաղեղի տակ երերալով վազող՝ ձիու տպաւորութիւնները, և յիշեց իր տակը պարկած Նիկիտային: Յետոյ միմիանց խառնեցին յիշողութիւնները տօնի, կնոջ, ստանովոյի, մոմերի արկղի մասին և դաւձեալ՝ այդ արկղի տակ պարկած՝ Նիկիտայի մասին: Յետոյ նրա աչքերին սկսեցին երևալ առուծախ անող գիւղացիներ, սպիտակ պատեր, երկաթով ծածկւած տներ, որոնց տակ Նիկիտան էր պարկած: Իսկ յետոյ էլ այդ բոլորը միմիանց խառնեցին, մէկը միւսի մէջ մտան և, ծիածանի գոյների նման, որոնք, միմեանց չեա միանալով, մէկ սպիտակ գոյն են կազմում, բոլոր զանազան կարգի տպաւորութիւնները, ի մի խառնելով, մի ոչնչութիւն կազմեցին, և նա քնեց: Նա եր-

կար քնեց, ատանց երազների, բայց լուսաբացին նորից նա սկսեց երազներ տեսնել: Նրան թուում էր, թէ ինքը իբր կանգնած է մոմերի արկղի մօտ և Տիխօնովի կինը իրանից: Կօպէկանոց մոմ է ուզում տօնի համար. և ինքը ուզում է մոմը վերցնել ու տալ նրան, բայց ձեռքերը չեն բարձրանում այլ սեղմւած մնացել են գրպանների մէջ: Ուզում է արկղի միւս կողմը դառնալ, բայց ոտները չեն շարժում, իսկ նոր ու մաքրած կրկնակօշիկները կպել էին քարէ յատակին ու անկարեչի էր լինում ոչ նրանց պոկել և ոչ էլ ոտները նրանց միջից հանել: Եւ յանկարծ մոմերի արկղը փոխում, դառնում է ոչ թէ մոմերի արկղ, այլ անկողին, և Վասիլիյ Անդրէիչը տեսնում է իրան փորի վրա պարկած մոմերի արկղի վրա, այսինքն՝ իր անկողնու վրա, իր տանը: Եւ սլարկած է նա իր անկողնու վրա ու չէ կարողանում վեր կենալ, իսկ վերկենալ հարկաւոր է, որովհետև շուտով նրա յետևից կը գալ ստանովոյ Իվան Մատվէիչը, որի հետ պէտք է գնալ կամ անտառի գինը սակարկելու, կամ թէ Բաշօի վրայի միջափոկը ուղղելու: Եւ հարցնում է Վասիլիյ Անդրէիչը իր կնոջը. «Ի՞նչ ևղաւ, Միկօլաֆա, չեկա՞ւ»:

—Չէ,—ասում է կինը, — չեկաւ: Եւ լսում է Վասիլիյ Անդրէիչը, որ մէկը կառքով իրանց դռանն է մօտենում: Երեկ նա է: Ոչ, տան մօտից անցաւ: «Միկօլաֆնա, այ Միկօլաֆնա, ի՞նչ է, դեռ չեկաւ»: — «Չեկաւ»: Եւ նա պարկած է անկողնու վրա ու շարունակ չէ կարողանում վեր կենալ և սպասելը նրան թէ վախ և թէ ուրախութիւն է պատճառում: Եւ յանկարծ ուրախութիւնը իրականանում է. գալիս է նա, որին նա սպասում էր, բայց եկողը էլ Ստանօվօյ իվան Մատվէիչը չէ, այլ մի ուրիշն է. սակայն հէնց նա է, ում որ նա սպասում էր: Նա եկաւ և կանչում է Վասիլիյ Անդրէիչին, և դա հէնց նա է, որ կանչում է Վասիլիյ Անդրէիչին, հէնց նոյն մարդն է, որ կանչեց նրան ու հրամայեց Նիկիտայի վրա պարկել: Վասիլիյ Անդրէիչը շափազանց ուրախ է, որ այդ ա՛նձանօթը եկաւ իր յետեւից: «Գալիս եմ», ձայն է տալիս նա ուրախ, և այդ ձայնը զարթեցնում է նրան: Եւ նա զաւթնում է, բայց զարթնում ու զգում է, որ ինքը այլևս բոլորովին նոյնը չէ, ինչ որ էր քնելուց առաջ: Նա ուզում է վեր կենալ ու չէ կարողանում, ուզում է ձեռքը շարժել, չէ կարողանում, ոտքը՝ նոյն-

պէս չէ կարողանում: Ուզում է գլուխը թեքել, այդ էլ չէ կարողանում: Եւ նա զարմանում է, բայց բոլորովին չէ վշտանում այդ բանից: Նա հասկանում է, որ դա մահն է, բայց բոլորովին չէ վշտանում դրանից: Եւ նա յիշում է, որ Նիկիտան պարկած է իր տակ, որ նա տաքացել ու կենդանի է, և Վասիլիյ Անդրէիչին թւում է, թէ ինքը Նիկիտան է, իսկ Նիկիտան ինքն է, և թէ իր կեանքը իր մէջ չէ, այլ Նիկիտայի մէջ: Նա լարում է իր լսողութիւնը և լսում է Նիկիտայի շնչառութիւնը ու մինչև իսկ նրա թոյլ խոժփոցը: «Նիկիտան կենդանի է, կը նշանակէ՝ կենդանի եմ և ես», յաղթական կերպով ասում է նա ինքն իրան:

Եւ նա մտաբերում է փողբրի, խաւութի, տան, առ ու ծախի և Միրօնովնեբրի միլիտօնեբրի մասին. նա դժուարանում է հասկանալ, թէ ինչու այն մարդը, որին Վասիլիյ հրետնով էին անւանում, զբաղւում էր այն բոլոր գործերով, ինչով որ ինքն էր զբաղւում: «Ի՞նչ արած, չէ՞ որ նա գիտէր, թէ բանը ինչու՞ն է», մտածում է նա Վասիլիյ Իրետնովի մասին: «Չը գիտէի, բայց հիմա գիտեմ: Հիմա արդէն հասկացայ: Հիմա գիտեմ»: Եւ նա նորից լսում է այն մարդի

ձայնը, որը արդէն կանչել էր նրան: «Գալիս եմ, գալիս եմ», ուրախութեամբ ու հըր-  
ճանքով ասում է նրա ամբողջ էութիւնը:  
Եւ նա զգում է, որ ինքը ազատ է և ոչինչ  
այլևս չէ խանգարում նրան գնալու:

Եւ այլևս ոչինչ չը տեսաւ, չը լսեց ու չը  
զգաց այս աշխարհում Վասիլիյ Անդրէիչը:

Շուրջը շարունակ փոթորկում էր առաջ-  
լան պէս: Ձիւնի նոյն մրրիկը շարունակում  
էր պտըտել օդի մէջ ու ծածկել՝ մեռած  
Վասիլիյ Անդրէիչի մուշտակը, ամբողջ մարմ-  
նով գողացող Բաշօին և՛ այլևս հազիւ երե-  
ւացող՝ սահնակն ու նրա խորքում՝ արդէն  
մեռած տիրոջ տակը տաքացող Նիկիտային:

## X

Առաւօտեան դէմ Նիկիտան զարթնից: Նը-  
րան զարթեցրեց ցուրտը, որ նորից սկսել  
էր մէջքը սառեցնել: Երազում նա տեսել էր,  
թէ իրը ինքը ջրադացիցն է վերադառնում,  
սայլով տիրոջ ալիւրն է ընրում, և թէ, գե-  
տակը անցնելու ժամանակ, կամուրջը թո-  
ղած, սայլը գետակի միջոցն էր քշելու խըր-  
ւել-մնացել էր ջրի մէջ: Եւ նա տեսնում է,  
որ ինքը մտել է սայլի տակը ու, մէջքը դէմ  
տալով, ուզում է բարձրացնել նրան: Բայց  
զարմանալի բան է. սայլը չէ շարժւում ու  
կպել է իր մէջքին, և ինքը ոչ կարողանում  
է սայլը բարձրացնել և ոչ էլ դուրս գալ  
նրա տակից: Սայլը ճնշում է ամբողջ ող-  
նաշարը: Եւ սրճափ էլ սառն է: Ի հարկէ,  
պէտք է անպատճառ դուրս գալ նրա տա-  
կից: «Դէ բաւական է», ասում է նա մի ինչ  
որ մարդու, որ սայլով հուփ է տալիս նրա

մէջքին: «Ջւախները վերցրում»: Բայց սայլը աւելի ու աւելի սառն է դառնում ու ճնշում նրան: Յանկարծ նա մի ինչ որ թրխկոց է լսում և բոլորովին զարթնում ու յիշում է ամեն ինչ: Սառը սայլը՝ այդ մեռած ու սառած տէրն է, որ պարկած է նրա վրա: Իսկ թրխկացնողը՝ Բաշօն է, որ երկու անգամ ամբակովը խփեց սայլին:

— Անդրէիչ, այ Անդրէիչ, — զգուշութեամբ, արդէն նախազգալով գործի էութիւնը, ձայն է տալիս Նիկիտան տիրոջը, աշխատելով ուղղել իր մէջքը:

Բայց Անդրէիչը չի պատասխանում. նրա փորն ու ոտները այնպէս պինդ, սառը և ծանր են, ինչպէս որ կշռաքաշեր լինեն:

— Երևի, արդէն վերջացել է: Աստուած հոգին լուսաւորի, — մտածում է Նիկիտան:

Նա գրուխը շուռ է տալիս, ձեռքով ձիւնը առջևից յետ է մղում և բացում է աչքերը: Լուսացել է. քամին շարունակում է առաջւան նման շրջապտտել լծափայտերի միջից, ձիւնը նորից վրա է տալիս, այն տարրերութեամբ միայն, որ այս անգամ այլ ևս, սահնակին դիպչելով, չի չրխկացնում, այլ բոլորովին անձայն թափում և աւելի ու աւելի ծածկում, տակոշն է ա-

նում թէ սահնակը և թէ ձին: Այլևս ձիու ոչ շարժելը և ոչ էլ շնչառութիւնն է լրսւում: «Երևի, նա էլ է սառել», մտածում է Նիկիտան Բաշօի մասին: Եւ յիբաւի, սրմբակների այն հարածները, որ Նիկիտային զարթեցրին, արդէն բոլորովին սառած Բաշօի՝ մահի դէմ մաքառելով՝ վերջին յուսահատական ճիգերն էին:

«Ով Տէր Բարերար, տեսնում եմ, ինձ էլ ես կանչում քեզ մօտ», ասում է ինքն իրան Նիկիտան: «Էհ, թող քո սուրբ կամօք լինի: Բայց գժւար է: Էհ, մարդ երկու անգամ չէ մեւնում, իսկ մէկ անգամ մեւնելուց չէս խուսափի: Միայն թէ շուտ լինի... Եւ նա նորից պահում է ձեռքը, խփում է աչքերը և բոլորովին մոռացութեան մէջ է ընկնում, հաւատացած լինելով. որ այս անգամ այլևս ինքը խելւայէս ու բոլորովին մեռնում է:

Միւս օրը կէս օրին միայն գիւղացիք թիներով ձիւնի տակից հանեցին Վասիլի Անդրէիչին ու Նիկիտային, ճանապարհից 30 սաժեն, իսկ գիւղից էլ կէս վերստ հեռաւորութեան վրա:

Ձիւնը կուտակել էր սահնակից էլ աւելի բարձր, բայց լծափայտերն ու նրանց

վրա կապած թաշկինակը դեռ երևում էին: Բաշօն մինչև փորը ձիւնի մէջ թաղած, ջուրն ու միջափօկը մէջքից վայր ընկած, կանգնած էր ամբողջապէս սպիտակ, մեռած գլուխը ոսկրացած խոչափողին կըպցրած. քթածակերին սառոյցներ էին կախւել, իսկ աչքերն էլ դառակալել ու նոյնպէս սառցակալել էին, կարծես թէ արտասուած լինէր: Մէկ գիշերւայ մէջ նա այնպէս էր նիհարել, որ միմիայն կաշին ու մորթն էին մնացել: Վասիլիյ Անդրէիչը փետացել էր, ինչպէս մի սառեցրած որս. ինչպէս որ ոտքերը շրտած սառել մնացել էին, հէնց այդպէս էլ նրան Նիկիտայի վրայից վայր գլորեցին: Նրա՝ բազէի նման՝ դուրս ընկած աչքերը սառոյցով կպել էին, իսկ բաց բերանն էլ ծայրերից խուզած բեղերի տակից լցւել էր ձիւնով: Նիկիտան կենդանի էր, թէև ամբողջապէս սառել էր: Երբ Նիկիտային զարթեցրին, նա հաւատացած էր, թէ ինքը հիմա արդէն մնած է, և թէ այն, ինչ իր հետ կասարւում է, տեղի է ունենում ոչ թէ այս, այլ միւս կեանքում: Բայց երբ նա լսեց իրան ձիւնի տակից հանող ու իր վրայից սառած Վասիլիյ Անդրէիչին մի կողմ գլորող գիւղացիների

աղաղակները, նա սկզբում զարմացաւ, որ այն կեանքումն էլ են գիւղացիք գոռոտում և որ այնտեղ էլ ինքը՝ նոյն մարմինը ունի: Իսկ երբ նա հասկացաւ, որ դեռ այստեղ, այս աշխարհումն է գտնւում ինքը, նա շատ աւելի վշտացաւ, քան թէ ուրախացաւ. նա վշտացաւ նամանաւանդ, երբ զգաց, որ իր երկու ոտների վրայի մատներն էլ ցուրտը տարել է:

Նիկիտան հիւանդանոցում պարկեց երկու ամիս: Նրա երեք մատը կտրեցին, իսկ միւսները առողջացան, այնպէս որ նա կարող էր աշխատել, և էլի քսան տարի շարունակից ապրել՝ սկզբում բանւորութիւն անելով, իսկ յետոյ ծերութեան ժամանակ, դրոնապան դարձաւ: Մեռաւ նա այս տարի միայն իր տանը, իր ցանկութեան համաձայն, սուրբ յատկոնների տակ և վառած մեղրամոմը ձեռքին շոնած: Մահից առաջ նա ներողութիւն խնդրեց իր պառու կնոջից և ինքն էլ ներեց նրան տակառագործի համար: Նա հրաժեշտ տւեց իր որդուն ու թոռնիկներին և մեռաւ, անկեղծաբար ուրախանալով այն հանգամանքի վրա, որ իր մահովը ազատում է որդուն ու հարսին աւելորդ հաց ուտողի բեռից, և որ ինքը հիմա արդէն իսկապէս



փոխադրուում է այս՝ իր համար ձանձրալի  
 դարձած կեանքից՝ այն միւս կեանքը, որը  
 նրան տարէց տարի ու ժամէ ժամ աւելի ու  
 աւելի հասկանալի ու գրաւիչ էր դառնում:  
 Աւելի լաւ, թէ՛ աւելի վատ է արդեօք նա  
 իրան զգում այնտեղ, ուր նա զարթնեց այս  
 իսկական մահից յետոյ. հրապարակեց նա  
 արդեօք, թէ այնտեղ գտաւ այն, ինչոր ըս-  
 տաւուում էր, — այդ բոլորը մենք շուտով կի-  
 մանանք:



14.271



o o o o o o o o o o

20 4 n n .

o o o o o o o o o o



891.71

S-80